



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Արցախի Սահմանադրական Հանրաքուէն

Փետրուար 20-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքին տեղի ունեցաւ Սահմանադրական հանրաքուէ կիսանախագահական համակարգէն անցում կատարելու համար դէպի նախագահական ուժեղ համակարգ:

Հանրաքուէի ընթացքին պարզուեցան շարք մը դրական երեւոյթներ, միաժամանակ առիթ տալով կարգ մը հարցադրումներու:

Դրական երեւոյթներու շարքին էր այն, որ Արցախի հանրաքուէն ոչ միայն կազմակերպչական առումով թափանցիկ էր, այլ նաեւ կայացաւ ազատ ու արդար պայմաններու մէջ ու եկաւ արտացոլացնելու բնակչութեան իսկական կարծիքը, ի տարբերութիւն Հայաստանի մէջ տեղի ունեցած Սահմանադրական հանրաքուէին:

Առաջարկուող Սահմանադրութեան դէմ եղողները անգամ եկան յայտարարելու թէ, որքէն ճնշումներու չէին ենթարկուած: Դրական կարծիք յայտնեցին նաեւ միջազգային դիտորդները, հաստատելով, որ Լեռնային Ղարաբաղը կը նկատուի ժողովրդավարութեան փոքր կղզիակ մը կովկասի մէջ:

Դրական կարեւոր երեւոյթ էր նաեւ այս առթիւ աւելի քան 200 դիտորդներու եւ լրագրողներու ժամանումը Արցախ, անտեսելով Ատրպէյճանի «սեւ ցուցակին» վրայ յայտնուելու սպառնալիքները:

Լրագրող Ալեքսանտր Լապչինի Պելառուսի կողմէ Ատրպէյճանին յանձնուած ու անոր դէմ ուղղուած մեղադրանքներով, Պաքու կը խորհէր թէ, պիտի կարողանայ աքցանի մէջ առնել Լեռնային Ղարաբաղը: Սակայն, պարզուեցաւ ճիշդ հակառակ պատկերը: Սպասուածէն աւելի մեծ թիւով օտարերկրացիներ, առանց վախի ժամանեցին Ստեփանակերտ՝ մեծ հարուած հասցնելով Ալիեւներու հեղինակութեան:

Այս բոլորով հանդերձ կը մնայ մեծ հարցական մը:

Հայաստանի նոր Սահմանադրութեամբ անցում պիտի կատարուի նախագահական համակարգէն դէպի խորհրդարանական-վարչապետական դրութիւն: Իսկ, Լեռնային Ղարաբաղ ճիշդ հակառակ ուղղութեամբ՝ կիսանախագահական պիտի անցնի նախագահականի: Արդեօք աւելի տրամաբանական պիտի չըլլար, որ մեր երկու հանրապետութիւնները, որոնք կը ձգտին ապագային դառնալու մէկ երկիր, որդեգրէին նոյնանման սահմանադրութիւն եւ համակարգ, ամրապնդելու համար միասնութեան գաղափարն ու հեռանկարը:

«ՄԱՍԻՍ»

Ընդդիմադիրները Չեն Հաւատար Սերժ Սարգսեանի Խօսքերուն

Հայաստանեան Ընդդիմադիր քաղաքական գործիչները հաւատք չեն ընծայեր նախագահ Սերժ Սարգսեանի հնչեցուցած այն խօսքերուն, թէ Հանրապետական Կուսակցութեան նախընտրական ցուցակը գլխաւորող Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան բանակի մէջ քարոզչութեամբ պիտի չզբաղուի:

«Հայ Ազգային Գոնկրէսի» փոխնախագահ, «Գոնկրէս-ՀԺԿ» դաշինքի թեկնածու Արամ Մանուկեան յայտնեց, որ առանց զինուորականներուն իշխող կուսակցութիւնը չի կրնար ձայներ ապահել: «Ժողովրդի մէջ Հանրապետականը այսօր բացի բացասական զգացմունքներից, ոչինչ չի առաջացնում եւ իրենց ռեսուրսը, որն արդէն սկսել են կիրառել, վարչականն է, կաշառքն է, բանակն է», - լրագրողներու հետ հանդիպման ընթացքին ըսած է Արամ Մանուկեան:

Աւելին, ան համոզուած է, որ այս ընտրութիւններուն աւելի մեծ թափով գործի պիտի դրուին վարչական միջոցները, որոնց շարքին նաեւ բանակը, բանի որ առաջին անգամ պիտի հրապարակուին ստորագրուած մատեանները, եւ բազմակի, կեղծ քուէարկութիւններով շեշտակի պիտի նուազի: Ընդդիմադիրներու հաշուարկներով, իշխանութիւնները մօտ կէս

միլիոն պահեստային ձայն պիտի կորսնցնեն:

«Ժառանգութեան» փոխնախագահ, «Օհանեան-Ռաֆֆի-Օսկանեան» դաշինքի ցուցակի երկրորդ հորիզոնականը զբաղեցնող Արմէն Մարտիրոսեանին եւս չէ զարմացուցած Սերժ Սարգսեանի յիշեալ յայտարարութիւնը: Վերջին 20 տարիներուն բոլոր ընտրութիւններէն առաջ ալ իշխանութիւնը վստահեցուցած է, որ զինուորներուն, պետական աշխատողներուն պիտի չպարտադրեն իրենց ձայն տալ, կաշառք պիտի չբաժանեն, չիշեցուց Մարտիրոսեանը:

«Թող ասեն: Խօսք ա էլի, ասում են: Ինչի՞նչ հաւատամ, երբ Սերժ Սարգսեանի առաջին հրապարակային, այսպէս ասեմ՝ ուղերձը եղել է անհասկացողութեան պատը քանդելու մասին, 2008 թուականին: Մինչդեռ, դրա փոխարէն ոչ թէ անհասկացողութեան պատը քանդուեց, այլ աւելի ամրակուցարձաւ, պեթնապատուեց, եւ մինչեւ հիմա ոչինչ չի փոխուել», - ըսած է Արմէն Մարտիրոսեան:

Բանակի հարցերով զբաղուող իրաւապաշտպան Արթուր Սաքունց, իր կարգին, վստահ է, որ գլխաւորելով ցուցակը, Վիգէն Սարգսեան մէկն ինչ պիտի ընէ, որ Հանրապետականէն բացի, զինուոր-

Շար.ը էջ 5

Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութեան Հետ Կապուած՝ Կիրքերը Բորբոքած են Ու Ոստիկաններ Կանչուած



Պոլսահայ կազմակերպութիւններու ժողովը՝ պատրիարքի ընտրութեան շուրջ

Պոլսոյ հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհուրդի առաջնորդ եպիսկոպոս Սահակ Մաշալեանի հրաժարականէն ետք ստեղծուած ճգնաժամը լուծելու համար, հայ համայնքի ներկայացուցիչներն ու հոգեւորականները երկու տարբեր հանդիպումներ ունեցած են:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ հայկական «Ակոս»-ը, հայկական հիմնադրամներու առաջնորդներ, ազդեցիկ հայեր, որոնց մէջ եղած է նաեւ հայ կին պատգամաւոր Սելինա Տողանը, հաւաքուած են

Սուրբ Աստուածածին եկեղեցոյ սրահներէն մէկուն մէջ: Միեւնոյն ժամանակ գաղտնի հանդիպում ունեցած են Սուրբ Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուն, Մելքոն Քարաքոսն, Վազգէն Բարընը, փոխպատրիարք Արք. Արամ Աթէշեանն ու եպիսկոպոս Սահակ Մաշալեանը:

Այս երկրորդ խումբը հանդիպման աւարտին արձանագրու-

Շար.ը էջ 4

Հանրաքուէով Հաստատուեցաւ ԼՂ Նոր Սահմանադրութիւնը

Փետրուար 21-ին, Ստեփանակերտի մէջ Լեռնային Ղարաբաղի Կեդրոնական Յանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանեան հրապարակեց, օր մը առաջ տեղի ունեցած հանրաքուէի նախնական արդիւնքները: Ըստ այդ տուեալներուն, հանրաքուէին մասնակցած է քուէարկելու իրաւունք ունեցող քաղաքացիներու 76.5 տոկոսը, որոնց 87.6 տոկոսը կողմ արտայայտուած է նոր Սահմանադրութեան եւ փաստօրէն Լեռնային Ղարաբաղը ունի նոր սահմանադրութիւն եւ այսուհետեւ պիտի դառնայ նախագահական հանրապետութիւն:

Յիշեցնենք որ, հանրաքուէի դրուած սահմանադրութեան մէջ հիմնական փոփոխութիւնը կը վերաբերէր Լեռնային Ղարաբաղի մէջ կառավարման համակարգը կիսանախագահականէն նախագահականի անցում կատարելուն:

Եւրոխորհրդարանի պատգամաւոր Ֆրէնք Էնկէլ, որ կը գլխաւորէր միջազգային դիտորդներու խումբը, այս առթիւ յայտարարած է, - «Յոյս ունիմ, որ միջազգային հանրութեան աւելի մեծ թիւով ներկայացուցիչներ կ'ընդունին, որ Հարաւային Կովկասի այս հատուածին մէջ մարդիկ ազատօրէն ընտրութիւն կը կատարեն»:

«Հայաստանին Դուր Չի Գալիս, Որ Ատրպէյճանը Սպառազինութիւն Է Գնում Ռուսաստանից», - Նալպանտեան

«Հայաստանին, իհարկէ, դուր չի գալիս, որ Ատրպէյճանը սպառազինութիւն է գնում Ռուսաստանից: Նման յայտարարութիւն կատարած է ՀՀ արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան, «Ռիա Նովոսթի» հետ հարցազրոյցի ընթացքին:

«Իհարկէ, մեզ կարող է դուր չգալ այն, որ Ատրպէյճանը գէնք է գնում մեր դաշնակցից, որը, որպէս Միսսքի խմբի համանախագահ, մեծ ջանքեր է գործադրում, այդ թւում եւ Հայաստանի հետ համատեղ, մեր տարածաշրջանում խաղաղութեան եւ կայունութեան պահպանման համար», - ըսած է ՀՀ ԱԳ նախարարը:

Ան նաեւ շեշտած է, որ Հայաստանը ստիպուած է ջանքեր գործադրել ուժի հաւասարակշռութիւնը պահելու համար:

«Ինչ վերաբերում է «սպառազինութիւնների մրցավազքին», Հայաստանը չէ, որ սպառնում է նոր

Շար.ը էջ 5

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Տնտեսական Ազատութեան Վարկանիշին մէջ Բարելաւած է Դիրքերը

Տնտեսական ազատութեան 2017 թուականի ցուցանիշով Հայաստանը 70.3 միավորով կը զբաղեցնէ 33-րդ տեղը՝ 180 գնահատուած երկիրներու շարքին, ընդգրկուելով առաւելագոյն ազատ երկիրներու խումբին մէջ:

Նախորդ տարուայ արդիւնքներու համեմատ Հայաստանի դիրքը բարելաւուած է 21 տեղով, ինչ որ համադրելի է երկրի կողմէ արձանագրուած պատմական լաւագոյն արդիւնքին: Եւրոպայի խումբին մէջ ընդգրկուած 45 երկիրներու ցանկին մէջ Հայաստանը կը զբաղեցնէ 19-րդ տեղը, միեւնոյն ժամանակ պահպանելով առաջատար դիրքեր ԱՊՀ երկիրներու շարքին:

Տնտեսական ազատութեան ցուցանիշի կտրուկ առաջընթացը պայմանաւորուած է Օրէնքի գերակայութիւն եւ կարգաւորման ազդեցութիւն յենասիւններու մասով նշանակալի աճով: Մասնաւորապէս՝ Սեփականութեան իրաւունքներու բաղադրիչով արձանագրուած է միավորի 35.5-ով առաջընթաց, իսկ կառավարութեան համարկման մակարդակով՝ 6.4-ով, ինչը լաւագոյն արդիւնքն է ԱՊՀ երկիրներու ցանկին մէջ:

Ներդրումային, գործարար, ֆինանսական ազատութիւններու բաղադրիչներով եւս Հայաստանը կը գլխավորէ ԱՊՀ երկիրներու ցանկը:

«Բանակցութիւններում Որեւէ Ծեղքում Արձանագրելու Հիմք Այս Պահին Չեն տեսնում»․ Սերժ Սարգսեան



ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան ՁՈՒ ղեկավար կազմի հաւաքի ժամանակ

Լեւոնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգաւորման ուղղութեամբ տեղի ունեցող բանակցութիւններուն մէջ որեւէ ճեղքում արձանագրելու հիմք այս պահին ես չեմ տեսներ: Այս մասին, 20 Փետրուարին, ՀՀ ՁՈՒ ղեկավար կազմի հաւաքի ժամանակ իր ելույթին մէջ նշած է ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը:

Ան, իր խօսքին մէջ անդրադառնալով տարածաշրջանային գարգացումներուն, մասնաւորապէս, նշած է.

«Այդ պարագայում Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ուժերի հաւասարակշռութեան եւ փխրուն խաղաղութեան պահպանման միակ միջոցն է: Պաշտօնական Պաքուն մշտապէս փորձում է մեզ մեղադրել ձեւաւորուած «ստատու-քոն» երկարաձգելու փորձերի մէջ: Սա իրականութեանը չի համապատասխանում: Ուզում եմ բոլորիդ հաւաստիացնել, որ մենք, իրօք, ցանկանում ենք, որպէսզի խնդիրը լուծուի, բայց իրականութիւնը այս է՝ ատրպէյճանցիներն առաջարկում են այնպիսի լուծումներ, որոնք մեզ համար անընդունելի են, ուստի այս պատճառով խնդիրը չի լուծուում: Երբ նրանք կը հասկանան, թէ ինչպիսի լուծում կարող է իրականութիւն դառնալ, այն ժամանակ էլ խնդիրը կը կարգաւորուի: Այս պատճառով էլ Ատրպէյճանն անընդհատ դիմում է մանր ու մեծ սադրանքներին, որպէսզի սրի իրավիճակն առաջնագծում եւ այդ ձեւով իր մասին յիշեցնի մեզ եւ միջազգային հանրութեանը:

«Այդ քարոզչական հարթները սին են եւ դատապարտուած են ձախողման: Մեր դիրքորոշումը հետեւեալն է. արդէն հաստատուած հրադադարը չի կարելի փոխել աւելի վատ պայմաններով հաստատուող հրադադարի հետ: Մենք պէտք է բանակցենք եւ ամուր հիմքեր դնենք երկու ժողովուրդների միջեւ բնականոն շփումներ եւ խաղաղութիւն հաստատելու համար»:

Գերմանիոյ Սահմանադրական Դատարանը Սերժած է Հայոց Գեղասպանութեան Գանաչման Դէմ Ուղղուած Հայցը

Գերմանիոյ սահմանադրական դատարանը մերժած է Պոլստեսթակի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող որոշման դէմ ներկայացուած հայցը: Այս մասին կը տեղեկացնէ թրքական «Dogan» լրատուական գործակալութիւնը:



դատարանի վճիռը եւ կը պատրաստուին յառաջիկային հայց ներկայացնել նաեւ Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարան (ՄԻԵԴ): Աքպաչ նշած է նաեւ, որ Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւի դէմ 8 տարբեր հայցեր ներկայացուած են Գերմանիոյ սահմանադրական դատարան:

Մագնուսով թուրք փաստաբան Ռամազան Աքպաչ ղեկավարած էր սահմանադրական դատարան՝ պահանջելով չեղարկել Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող ու դատապարտող խորհրդարանական որոշումը: «Dogan»-ի հետ գրոցցի ընթացքին Աքպաչ ըսած է, որ Գերմանիոյ դատարանը իր ներկայացուցած հայցադիմումը վարոյթ չէ ընդունած: Որպէս հիմնաւորում դատարանը նշած է, որ չկան բաւարար ապացոյցներ այն մասին, թէ Պոլստեսթակի որոշումը կը ոտնահարէ հայցուորի հիմնարար կամ յարակից իրաւունքները:

Թուրք փաստաբանը աւելցուցած է, որ իրենք արդէն ստացած են

Ատրպէյճանի Առաջին Տիկինը Նշանակուծ է Երկրի Առաջին Փոխնախագահ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը իր կնոջը՝ Մեհրիբեան Ալիեւային նշանակել է երկրի առաջին փոխնախագահ: Հրամանագրի տեքստը տեղադրուած է Ատրպէյճանի նախագահի պաշտօնական կայքէջում:



Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ եւ իր առաջին փոխնախագահ՝ Մեհրիբեան

Անցեալ տարուայ սեպտեմբերին Ատրպէյճանում ընդունուած սահմանադրական փոփոխութիւններով սահմանուեցին երկրի առաջին փոխնախագահի եւ փոխնախագահի պաշտօնները:

«Մեղան» հեռուստաընկերութիւնը, հաղորդելով, որ առաջին տիկինը նշանակուեց առաջին փոխնախագահ, յիշեցնում է, որ սահմանադրական փոփոխութեամբ երկրի նախագահի լիազորութիւնների վաղաժամկէտ դադարեցման, հրաժարականի կամ մահուան դէպքում մինչեւ նախագահական նոր ընտրութիւնները երկրի ղեկավարի լիազորութիւններն անցնում են ոչ թէ վարչապետին, ինչպէս նախկինում էր, այլ՝ առաջին փոխնախագահին: Կարճ եւ պարզ ասած՝ եթէ Իլհամ Ալիեւը Ատրպէյճանի նախագահ չլինի, նրան կը փոխարինի կինը՝ Մեհրիբեան Ալիեւան:

Ատրպէյճանական մամուլը ներկայացնում է առաջին փոխնախագահի լիազորութիւնները եւ

Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութեան

Շարունակուած էջ 1-էն

թիւն ստորագրած է, ուր նշուած է, որ եպիսկոպոս Մաշալեանն ու արքեպիսկոպոս Աթէշեանը համաձայնութեան եկած են ու պատրիարքի ընտրութիւնները տեղի պիտի ունենան 28 Մայիսին, իսկ մինչ այդ փոխպատրիարքի պաշտօնին վրայ պիտի շարունակէ մնալ Արք. Արամ Աթէշեանը:

Այս հանդիպումն ու հանդիպման արձանագրութիւնը խիստ վրդովմունք պատճառած են դուրսը հաւաքուած հայ համայնքի ներկայացուցիչներուն: Կիրքերը այնքան բռնուցած են, որ հրմշտոց ու վիրաւորանքներ սկսած է, որու պատճառով ոստիկաններ դէպքի վայր կանչուած են:

Հայ համայնքի աշխոյժ ներկայացուցիչներէն Թորոս Ալճանը յայտարարած է, թէ չի ճանչնար ընդունուած արձանագրութիւնը, քանի որ ան հրէշաւոր քայլ է, իրաւական առումով՝ անթոյլատրելի:

Պատգամաւոր Սեյիմա Տողանը եւս բողոքած է ընդունուած արձանագրութեանն՝ յայտնելով, թէ ան երկու կողմի միջեւ հաշտութեան

պայմանագիր է, սակայն խնդրի հիմնարար լուծում չէ եւ այդպիսով Աթէշեան պիտի շարունակէ ղեկավարել պատրիարքարանը:

Պոլսահայ հիմնադրամներու համերաշխութեան միութեան փոխնախագահ Յարութիւն Շանլըն ալ շեշտած է, որ եթէ չունին պատրիարք, ուրեմն չի կրնար փոխպատրիարք ըլլալ եւ Աթէշեանը պարտաւոր է անմիջապէս հրաժարական տալ: Ան արձանագրութիւնը անուանած է Արք. Աթէշեանին փրկելու գործողութիւն:

Յիշեցնենք, որ օրեր առաջ եպիսկոպոս Մաշալեան հրաժարական ներկայացնելու մասին գրաւոր յայտարարութիւն տարածած էր՝ շեշտելով, որ այդ քայլին դիմած է Պոլսոյ հայոց պատրիարքական տեղապահ Արք. Արամ Աթէշեանի պահանջով պատճառով, քանի որ վերջինս ամէն կերպ կը խոչընդոտէ պատրիարքի ընտրութիւնները իրականացնելը:

Վերջին օրերուն կը տեղեկացուի նաեւ, որ Արամ Արք. Աթէշեան եւ Սահակ Եպիսկոպոս Մաշալեան կանչուած են էջմիածին, քննարկելու համար ստեղծուած կացութիւնը:

փոխութիւններին կ'ենթարկուի: Իլհամ Ալիեւը նախկինում հարուստ Ատրպէյճանի նախագահն է 2003 թուականից: Երկրի ղեկավարի պաշտօնում նա փոխարինեց հորը՝

Հեյրապ Ալիեւին, ով կեանքի վերջին ամիսներին կառավարման համակարգում փոփոխութիւններ կատարեց՝ որդու համար ճանապարհ հարթելով դէպի նախագահի պաշտօնը:

Արժանթինցի Պատգամաւորը Հայոց Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Օրինագիծ Երկայացուցած է

Արժանթինի խորհրդարանի պատգամաւոր Նիլտա Կարէն օրինագիծ ներկայացուցած է ցեղասպանութիւններու ժխտման քրեականացման մասին, որ կը ներառէ նաեւ Հայոց ցեղասպանութեան ժխտումը: Խորհրդարանականը այս մասին յայտարարած է Prensa Armenia-ի հետ հարցազրոյցին:



Հօղլուի Արժանթին կատարած այցելութիւն առնչուող հարցին՝ պատգամաւորը նշած է. «Ես չեմ գիտէր, թէ Թուրքիա ինչպէս կ'արձագանքէր: Ես մէկ բան գիտեմ, որ Արժանթին ինքնիշխան պետութիւն է, իսկ Ազգային գոնկրեսը կը ներկայացնէ այդ պետութեան լիազօրութիւնները»:

Նախապէս Կարէն զբաղեցուցած է պաշտպանութեան եւ անվտանգութեան նախարարի պաշտօնները:

Օրինագիծը, որ հիմնուած է եւրոպական շարք մը երկիրներու օրէնսդրութեան վրայ, նախատեսած է Քրեական օրէնագրքի մէջ քրեական պատիժ սահմանել անոնց համար, որոնք «հրապարակաւ կը ժխտեն, կը նուազեցնեն, կ'արդարացնեն կամ ձեւով մը հաւանութիւն կու տան ցեղասպանութեան կամ մարդկութեան նկատմամբ կատարուած յանցագործութիւններուն»: Օրինագիծին մէջ այդ մէկը համադրելի է խօսքի ազատութեան եւ արդարացուած է՝ երբ կը պաշտպանէ մարդու իրաւունքները, հասարակական կարգը եւ ազգային անվտանգութիւնը:

Պատասխանելով Թուրքիոյ ԱԳ նախարար Մեւլուտ Չաւուշ-

Թալիշները Ստիպողաբար Ուղարկուած են Առաջնագիծ՝ Մասդաղ. Ատրպէյճանէն ՀՀ Տեղափոխուած Շահին Միրզօյեւ



Ատրպէյճանէն վերջերս Հայաստան տեղափոխուած, Թալիշական ազգային շարժման ներկայացուցիչ Շահին Միրզօյեւ նշեց, թէ ատրպէյճանական բանակի առաջնագիծին վրայ կը ծառայեն մեծ մասամբ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ, որոնք կը կազմեն ծառայող զինուորներու 70-80 տոկոսը:

«Թալիշները կը ծառայեն առաջնագիծի վրայ: Անոնց բանակ կը տանին, կարելի է ըսել, ստիպողաբար ու կ'ուղարկեն առաջնագիծ, մտադր: Այս է պատճառը, որ սպանուածներու շարքին, անուններէն կրնաք տեսնել, որ մեծ մասամբ թալիշներն են, թաթերը, ուտիները», - ըսաւ Շահին Միրզօյեւ:

Ըստ անոր՝ բանակի միայն 20-30 տոկոսն են «տեղացիները», որոնք «իրենց թուրքեր կը կոչեն»:

«Բայց անոնք առաջնագիծի վրայ չեն, խոհարարներ են, պահեստներուն մէջ կը ծառայեն եւ այլն», - ըսաւ Շահին Միրզօյեւ:

Այն հարցին, թէ՛ եթէ ստիպողաբար բանակ կ'երթան, չե՞ն կրնար հրաժարիլ ծառայութենէն, Շահին Միրզօյեւ պատասխանեց, որ այդ ուղղակիօրէն կը վտանգէ անոնց ու անոնց ընտանիքներու կեանքը: «Անոնց առնուազն կը բանտարկեն, ու բացի այդ՝ կը տուժէ անոնց ամբողջ ընտանիքը: Ես հիմա Հայաստան եմ, 92-ամեայ հայրս այնտեղ է ու անոր ստիպած են, որ հրաժարի ինձմէ: Ան նոյնիսկ չի հասկնար, թէ ինչ կը կատարուի, ծեր է, բայց անոր ստիպած են հրաժարիլ ինձմէ», - բացատրեց Շահին Միրզօյեւ:

Ան նշեց, որ Հայաստանի մէջ ինքն ու իր ընտանիքի անդամները իրենք իրենց լաւ կը զգան:

Ատոմ Էկոյեան Արժանացած է Գանատայի Ազգային Շքանշանի Բարձրագոյն Տիտղոսին



17 Փետրուարին Գանատայի կառավարութեան անունով՝ ընդհ. նահանգապետ Տէյվիտ ձոնսթըն Գանատայի Ազգային շքանշանի բարձրագոյն տիտղոսը շնորհած է շարժանկարի բեմադրիչ Ատոմ Էկոյեանին՝ երկրի մշակոյթին անոր ունեցած ներդրումին համար: Այս մասին Դիմազիրքի իր էջին մէջ գրած է էկոյեանի կինը՝ դերասանուհի Արսինէ Խանճեան:

մնալով Գանատայի: Ընկերութեան, մեկուսացման, մեր կեանքին մէջ արհեստագիտութեան դերին նուիրուած նիւթերը առանցքը կը կազմեն անոր ստեղծագործական գերազանց գործունէութեան: Ան նաեւ առատաձեռնօրէն նուիրելով իր ժամանակն ու տաղանդը՝ կը դասաւանդէ եւ կը ստանձնէ մշակութային ձեռնարկներու եւ շարժանկարի փառատօներու գործօն մասնակցութիւն, մաս կը կազմէ դատակազմերու: Նաեւ տեսողական արուեստի տաղանդաւոր կատարող է ան, միանգամայն թատրոնի ու օփերայի բեմադիր», յայտարարած է ձոնսթըն, էկոյեանին պարգեւը շնորհելու ժամանակ:

«Ատոմ էկոյեան նուիրուած է երկրի տաղանդներու յայտնաբերման եւ մշակութային ասպարէզի զարգացման գործին: Որպէս շարժանկարի բեմադիր՝ մեր մշակութային գանձերէն մէկը, ան ձեռք ձգած է միջազգային համբաւ, միեւնոյն ժամանակ ամուր կապուած

Ընդդիմադիրները Չեն Հաւատար

Շարունակուած էջ 1-էն

սերը գաղտնի են: «Այսինքն, մենք՝ դիտորդներս կամ հանրութիւնը չենք իմանալու, թէ քանի հոգի եւ որ տեղամասում քուէարկեցին: Իմանալու են միայն իրենք, միաժամանակ, իմանալով նաեւ, թէ ինչպէս են քուէարկել: Իսկ եթէ քուէարկութեան արդիւնքները չբաւարարի իրենց, ապա կարող են պատասխանատուութեան ենթարկել ամբողջ զորամասը, յայտնաբերելու եւ պատժելու համար այդ անհնազանդներին», - ըսած է Արթուր Սաքունց:

ները այլ ուժի ձայն չտան: «Բնականաբար, բոլոր մնացած կուսակցութիւնները օգտին քուէարկելու փրօցէն է կանխելու: Ուղղորդելու է նաեւ ամբողջ Ձիւնուած ուժերին? քուէարկելու Հանրապետական կուսակցութեան օգտին», - ըսած է իրաւապաշտպանը:

Սաքունց նաեւ չի շեղուցած է՝ զինուորներու ընտրական ցուցակներն ու քուէարկութեան տեղամաս-

Հայաստանին Դուր Չի Գալիս

Շարունակուած էջ 1-էն

եղանք նախորդ տարուայ Ապրիլին: Բնական է, որ նման պայմաններում ստիպուած ենք բոլոր ջանքերը գործադրել, տարածաշրջանում ուժերի պալանսի պահպանման եւ էսկալացիայի նոր բռնկումներէն, նոր պատերազմից խուսափելու համար», - աւելցուցած է Նալպանտեան:

պատերազմով, Հայաստանը չէ, որ պարծենում է իր ռազմական պիւտճէի թուերով եւ գնուած սպառազինութեան քանակով, որ խախտում է ԵՍՁՈՒ նորմերը: Թէ ինչի է այդ ամէնը յանգեցնում, ականատեսը

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104


Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

Karabakh Overwhelmingly Votes for Constitutional Reforms



STEPANAKERT (RFE/RL) — Voters in Nagorno-Karabakh overwhelmingly backed constitutional changes in a referendum held on Monday, officials in Stepanakert said on Tuesday.

According to official preliminary results of the referendum released by the local Central Election Commission (CEC), more than 87 percent of them voted for the unrecognized republic's new constitution that allows its president, Bako Sahakian, to extend his rule. The CEC put the voter turnout at 76.5 percent.

The commission chairwoman, Srubhi Arzumanyan, said it has received no formal reports of irregularities from local, Armenian or more than a hundred foreign observers. The latter mostly monitored the vote in a personal capacity.

"Nothing problematic can be said about this referendum," said Frank Engel, a pro-Armenian member of the European Parliament from Luxembourg.

"I would hope that more actors in the international community take note of the fact that in this part of the

South Caucasus people decide freely," Engel told reporters in Stepanakert.

The foreign observers also included Reiner Morell, Germany's former ambassador to Armenia. "In my view, it was a fair, normal and democratic referendum," Morell told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). The vote demonstrated "the effectiveness of statehood" established by the Karabakh Armenians, he said.

The United States, Russia and France — the three nations trying to broker a solution to the Karabakh conflict — commented rather cautiously to the referendum last week. In a joint statement, the U.S., Russian and French co-chairs of the OSCE Minsk Group noted that "the de-facto Nagorno-Karabakh authorities view the use of such a procedure as an effort to organize the public life of their population."

But they stressed that the referendum results will "in no way prejudice the final status of Nagorno-Karabakh or the outcome of the ongoing negotia-

Continued on page 2

President Sarkisian Warns Baku Against Fresh Karabakh Offensive

YEREVAN (RFE/RL) — President Serzh Sarkisian has warned Azerbaijan against launching offensive military operations in Nagorno-Karabakh in the run-up to Armenia's parliamentary elections scheduled for April 2.

Sarkisian also told Armenian veterans of the 1991-1994 war with Azerbaijan to be prepared for renewed fighting around Karabakh as he addressed a weekend conference of the Yerkrapah Union, the largest of the organizations uniting them.

"Today some in Azerbaijan still have illusions that an Armenia focused on elections will be very distracted and therefore vulnerable," he told conference delegates. "Based on those hollow illusions, the enemy may try to resort to new provocations."

"I see it as my duty to declare from the podium of this conference that any possible provocation would receive a worthy response," he said. "Politics based on illusions cannot have a future."

Sarkisian went on to urge Yerkrapah Union members to "keep the gunpowder dry" in the face of a persisting military threat from Azerbaijan. "Our struggle is not finished yet," he said.

The president repeated the same message when he met with the Armenian army's top brass on Monday. "This is why I expect utmost vigilance from you in this period," he told army generals.

Sarkisian said his government "will save no effort" to sustain the military balance with Azerbaijan. He also denied Azerbaijani claims that the Armenian side is seeking to prolong the status quo. Yerevan is committed to a peaceful Karabakh settlement based on mutual concessions, he said.

The Armenian elections will coincide with the first anniversary of the start of the worst fighting along the Karabakh "line of contact" since a Russian-mediated truce stopped the

Continued on page 3

U.S., Russia, France Warn Against Karabakh Escalation



MUNICH (RFE/RL) -- U.S., Russian and French mediators on Friday again urged the parties to the Nagorno-Karabakh conflict to "adhere strictly" to ceasefire agreements after hosting a meeting between the Armenian and Azerbaijani foreign ministers.

Foreign Ministers Edward Nalbandian and Elmar Mammadyarov met in Munich late on Thursday shortly after holding separate talks with the three co-chairs of the OSCE Minsk Group. Andrzej Kasprzyk, the top OSCE official monitoring the ceasefire regime in the conflict zone, was also present at the Nalbandian-Mammadyarov meeting.

"The Co-Chairs reiterated that there is no alternative to a peaceful solution to the conflict and that war is not an option, and called upon the sides to exercise restraint on the terrain as well as in their public communications and to prepare their population for peace and not for war," the mediators said in a joint statement.

They warned that the use of force

by either party "would be condemned by the international community."

Truce violations along "the line of contact" around Karabakh have intensified in recent weeks after several months of relative calm that followed four-day hostilities there in April 2016. The warring sides have accused each other of using mortars and rocket-propelled grenades on a virtually daily basis. The Karabakh Armenian military says Azerbaijani troops have also shelled its frontline positions with light cannons.

The mediators said they discussed with Mammadyarov and Nalbandian concrete steps which they believe should be taken to implement confidence-building agreements that were reached by the Armenian and Azerbaijani presidents at their last two meetings held in May and June last year.

The agreements call for concrete measures designed to prevent armed

Continued on page 3

Nor Zartonk: Game of Thrones Continues

ISTANBUL (Agos) — Nor Zartonk (New Renaissance) is a platform founded by Armenians of Turkey and works for the intellectual development of the peoples of Turkey starting from Armenians of Turkey, contributing to the internalization of universal and libertarian values. Today, Nor Zartonk platform released a written statement noting that the seat of the patriarchate has been usurped for 9 years and "9 years of silence of foundation chairs and clerics is thought provoking".

Nor Zartonk also pointed out the way of operating of the foundations and demanded transparent administration.

Discussing the resignation of Masalyan, Nor Zartonk defined the resignation as "right but late": "Not

only Masalyan, but also all clerics in the Clerical Assembly should explain why they stayed silent for such a long time and why they let the seat of the patriarch become discredited."

Nor Zartonk also mentioned the secret meeting in the patriarchate and the protocol that was signed during that meeting: "Alliance of evil wanted to prevent possible debates and questionings that will emerge due to this crisis." It is also stated that the problem is not about the election; the problem is about the mentality and the system itself.

Stating that the protocol signed in the secret meeting is invalid for Armenian society, Nor Zartonk urged Atesyan to resign and demanded institutions managed by "wealthy men" become transparent and accountable.

German Constitutional Court Rejects Complaint Against Armenian Genocide Resolution

BERLIN (Armradio) -- The Federal Constitutional Court of Germany rejected an appeal to annul the bill on recognition of the Armenian Genocide adopted by the Bundestag on June 2, 2016.

The German Constitutional Court did not accept the appeal, stating that there was insufficient evidence that recognition of the Armenian Genocide violated the law, Ermenihaber.am reports, quoting the Turkish Dogan agency.

Ramazan Akbas, a lawyer from Turkey who demanded the cancellation of the decision of the Bundestag, has announced an appeal will be filed to the European Court of Human Rights.

Earlier this week a Cologne court banned the Allianz Deutscher Demokraten (Alliance of German Democrats).



The Alliance of German Democrats was founded by entrepreneur Remzi Aru, lawyer Ramazan Akbas and Halil Ertem to prevent the adoption of the resolution on the Armenian genocide by the German Bundestag.

Talysh Minority Leader Exposes the Sad Realities in Azerbaijan



YEREVAN (Armenpress) -- According to Talysh minority freedom movement leader Shahin Mirzoyev, everyone in Azerbaijan realizes that the corrupt regime is unable to settle Nagorno Karabakh conflict or negotiate with anyone on that issue. Mirzoyev, member of Talysh Cultural Council and journalist at the "Tolishi Sado" newspaper, has moved to Armenia with his family and requested for temporary asylum from the Armenian leadership.

"Generally, it is necessary to study the roots, to understand how that country was established. First of all, there is no Azerbaijani nation, and now they are used to say that Azerbaijanis are Turks. Everyone in Azerbaijan knows well that this regime is in no way capable of solving Nagorno Karabakh issue. The corrupt regime cannot negotiate with anyone. The April war disclosed everything – starting from the border, from Ganja city everybody fled to Baku in panic taking with them their sheep and lambs. Baku was flooded with sheep and lambs", Mirzov said during a Yerevan press conference.

Mirzoyev is convinced that Azerbaijani leader Ilham Aliyev will not launch a war, since he has no support. "People's support is necessary for unleashing war, but he does not have the support of the people. Why did the war stop? Maybe you

have some other interpretation for that, but Azerbaijanis and the Talysh people think in another way. First of all Aliyev started to believe in his own illusions, thinking that Armenia is starving and people are dying of hunger. Taking those illusions for reality he launched an offensive against Nagorno Karabakh on April 2. Encountering a tough resistance and fearful of possible counter-attack, he was forced to stop the war", Mirzoyev said, adding that they have evidences how Azerbaijani soldiers fled in panic.

"They faced death from both sides. Turkish supervisors were standing behind, firing at anybody who would try to flee. Is it possible to wage a war in this way and win? In no case", participant of Talysh freedom movement said.

According to him, the Talysh people just sought some autonomy, but the Azerbaijani leadership has killed many Talysh representatives and oppressed them. "But now we do not agree even to a high status. I cannot talk on behalf of everyone, but personally I do not agree to that. We want to create our own state and I think it will happen soon. Talyshistan will become a reality", Mirzoyev expressed conviction.

Mirzoyev also noted that the majority of Azerbaijanis do not watch

French Presidential Candidate Benoit Hamon Condemns Vandalization of Misak Manouchian's Statue



PARIS (Armenpress) -- French Socialist Party's candidate in the presidential elections Benoit Hamon has condemned the act of vandalization of Misak Manouchian's statue.

"Shame on those who did it. He and his family were shot dead by the Nazis in France", Benoit Hamon tweeted and posted the photo of Manouchian's group.

Earlier member of French national Assembly Henri Jibrayel had severely condemned the act of vandalization of Misak Manouchian's statue. The MP urges in his statement to investigate and reveal the culprits.

"Misak Manouchian headed the group comprised of mainly refugees that struggled during the years of Resistance to free France from Nazism. This act is an insult for the Republic and anything France values, especially for those struggling on behalf of this country", Henri Jibrayel announced.

Parliamentarian Marie-Arlette

Carlotti has also sent a letter to the Minister of Interior of France over the case.

Missak Manouchian (1 September 1906 – 21 February 1944) was a French-Armenian poet and communist activist. An Armenian Genocide survivor, he moved to France from an orphanage in Lebanon in 1925. He was active in communist Armenian literary circles. During World War II, he became the military commissioner of FTP-MOI, a group consisting of European immigrants, including many Jews, in the Paris region which carried out assassinations and bombings of Nazi targets. According to one author, the Manouchian group was the most active French Resistance group. Manouchian and many of his comrades were arrested in November 1943 and executed by the Nazis in Fort Mont-Valérien on 21 February 1944. He is considered hero of the French Resistance.

Karabakh Overwhelmingly Votes

Continued from page 1

tions" on a peaceful resolution of the Armenian-Azerbaijani conflict.

Armenia, meanwhile, hailed the Karabakh leadership's handling of the vote on Tuesday. "Once again the people of Artsakh demonstrated that their will to build a democratic society is irreversible despite all the difficulties resulting from the continuing use of force and threats of it, the economic blockade and other hostile actions by Azerbaijan," Foreign Minister Edward Nalbandian said in a

TV, since they do not believe in the state propaganda about a prosperous country. "Everyone in Azerbaijan knows that when conscript starts, skirmishes take place in the front line, and they demonstratively bring to Baku bodies of a number of killed soldiers, in order the people give bribes for preventing their children from taking to serve on the front line. And here mainly poor people serve, and this goes for the Talysh people first of all, though everyone knows, including you, that we, the Talysh people, are not interested in that war and Nagorno Karabakh issue is not connected with us", he said.

"There are about 2 mln Talysh people living in Azerbaijan, and they are actually seen as enemies of the

statement.

Nalbandian claimed that Baku regularly condemns "democratic processes" in Karabakh because of its own poor human rights record.

The new constitution drafted by Sahakian and backed by most Karabakh parties envisages the Armenian-populated territory's transition to a presidential system of government. Proponents of this change say a fully presidential system of government will put Karabakh in a better position to cope with the unresolved conflict with Azerbaijan.

state. They are deprived of the opportunity to raise their issues on mass media," Mirzoyev said, addressing the conference.

According to him, about 300 thousand Talyshis have fled to Russia and then moved to other countries over the past years.

The Armenian MFA on February 11 announced that the Armenian leadership received a request from Shahin Mirzoyev for temporary asylum, he was obliged to flee from Azerbaijan due to the persecutions against ethnic and religious minorities and gross violations of their rights, and to arrive to Armenia with his family. Armenian leadership reacted positively to the request of Shahin Mirzoyev.

USC Innovate Armenia - The Retreat



LOS ANGELES -- Undergraduate and graduate students from across the United States and Canada gathered in Los Angeles on two different weekends to focus on the contemporary Armenian experience and think about Armenian issues in multi-layered and thoughtful ways.

In January, there were 25 undergraduate students from 15 universities, and in February, 25 graduate students from 13 universities came to a secluded location in Hollywood, California, to explore new and out-of-the-box ways of thinking about Armenians and the Armenian nation. This program of the USC Institute of Armenian Studies is called Innovate Armenia - The Retreat.

Altogether, nearly 200 students applied to participate in the two weekends. Those who were selected were accepted based on the depth and thoughtfulness of the questions they submitted as part of their application.

Each of the two weekends was



organized around three sessions, each focusing on one aspect of the contemporary Armenian world: Republic of Armenia, the post-genocide experience, and the Diaspora.

The discussions were led by thought leaders with backgrounds in political science, economics, linguistics, art, civil society, and history. They included scholar of Russian social movements Karena Avedissian; writer, actor, artist Vahe Berberian; Professor of Comparative Literature at the California State University, Long Beach, Talar Chahinian; political economist and graduate of the London School of Economics, Babken DerGrigorian; Professor of Language and Literature at the University of California, Los Angeles (UCLA), Hagop Gulludjian; Professor of Linguistics at UCLA, Shushan Karapetian; the Chair of the

Political Science Department at Stonehill College in Massachusetts, Anna Ohanyan; and Chief Innovation Officer at CIVICUS: World Alliance for Citizen Participation, Alex Sardar. The discussion drivers worked with students to identify those areas of research that the Institute can support and that students themselves would like to take on.

Salpi Ghazarian, Director of the USC Institute of Armenian Studies, said, "a university education prepares students to approach problems with reason and creativity; it is an education that prepares them to become leaders in almost any endeavor. This is what we need in the Armenian world - in Armenia and the Diaspora, and we used this opportunity to invite some of our sharpest young minds to think about Armenian issues critically and without assumptions. On the contrary, they were challenged at each step to question their assumptions."

As a result, the students were

challenged to ask questions and engage in constructive debate about expectations, identity, community roles, individual responsibility, and more. The thought leaders encouraged information-based questioning, and fostered knowledge about the real social, political, educational, economic, and emotional issues confronting Armenians in the 21st century.

The diverse group of students from the University of Iowa, Massachusetts Institute of Technology, University of Southern California, Rutgers University, Columbia University, California Institute of the Arts, Pomona College, Carnegie Mellon, and University of California, Berkeley, and a dozen other centers of higher education, identified areas of research that they would like to pursue, regardless of their own disciplinary directions.

Atom Egoyan Named Companion of the Order of Canada



OTTAWA -- On February 17, filmmaker Atom Egoyan was honored with the Companion of the Order of Canada, the highest honor the Canadian government bestows to its citizens, by His Excellency the Right Honourable David Johnston, Governor General of Canada, for his contribution to Canadian culture, Arsinee Khanjian said on Facebook.

The honoring speech said: "Atom Egoyan is committed to the development of homegrown talent and a vibrant cultural industry. One of our cultural treasures, he has built an international reputation as a filmmaker while

remaining firmly rooted in Canada. His outstanding body of work often focuses on the themes of community, isolation and the role of technology in our lives. Generous with his time and talent, he serves as a mentor and teacher, and as an active member of cultural boards and film festival juries. He is also a talented visual artist and director of both theater and opera."

Established in 1967 by Her Majesty Queen Elizabeth II, the Order of Canada is the cornerstone of the Canadian Honours System, and recognizes outstanding achievement, dedication to the community and service to the nation.

President Sarkisian Warns Baku

Continued from page 1

Armenian-Azerbaijani war in 1994. At least 190 soldiers from both warring sides were killed during four-days of heavy fighting sparked an Azerbaijani offensive.

Russia as well as the two other mediating powers — the United States and France — scrambled to halt the hostilities and bolster the ceasefire regime in the conflict zone. In their latest joint statement released on Friday, the U.S., Russian and French co-chairs of the OSCE Minsk Group again stressed that "war is not an option."

Thousands of Yerkrpah members took part in the April 2016 fighting which is now commonly referred to as "the four-day war."

In his weekend speech, Sarkisian

reiterated the official Armenian line that Baku cannot forcibly regain control over Karabakh and Armenian-controlled territories surrounding it. "Many of you will remember that in the early 1990s, when Azerbaijan's ministers of defense were replaced once a week, each of them viewed his duty to declare that in a week or a couple of days he will be drinking tea in Stepanakert," he told the war veterans.

"However, as the history shows, through the efforts of the heroic sons of our nation not only did they not drink tea in Stepanakert but they were also deprived of the possibility of drinking tea in Aghdam, Fisuli, Jabrail, Kubatli, Karvachar (Kelbajar), and other places," he said, listing Azerbaijani towns captured by Karabakh Armenian forces in 1993.

U.S., Russia, France Warn

Continued from page 1

incidents on the Karabakh frontline and the Armenian-Azerbaijani border. Those include international investigations of truce violations and deployment of more OSCE observers. Armenia claims that Azerbaijan has been dragging its feet over these safeguards.

According to the Armenian Foreign Ministry, Nalbandian told the co-chairs that Baku is still ignoring their appeals for peace and resorting to ceasefire violations. The ministry issued no statements on his ensuing talks with Mammadyarov.

Azerbaijan's Foreign Ministry also gave no details of what it called a "joint dinner" of Mammadyarov, Nalbandian and the mediators. A ministry statement made no mention of the truce safeguards sought by the latter. It said Mammadyarov discussed with Richard Hoagland, Igor Popov and Stephane Visconti ways of "intensifying the negotiation process."

In their joint statement, Hoagland, Popov and Visconti said they also called on both sides to "demonstrate greater flexibility and resume comprehensive negotiations on reaching a lasting settlement as soon as possible."

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱԿԱՍԱԳԵԼԻ ԱՐԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ

Dr. Ümit Kurt to Speak on “The Curious Case of Armenian Genocide Perpetrator Ahmed Faik Bey”

FRESNO -- Dr. Ümit Kurt, a Research Fellow at Harvard University will present talk on “The Curious Case of Armenian Genocide Perpetrator Ahmed Faik Bey” 7:30PM on Tuesday, March 7, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

The lecture is part of the Armenian Studies Program Spring 2017 Lecture Series, with the support of the Leon S. Peters Foundation.

Within the publications on the history of Armenian genocide, studies on the perpetrators received and continue to receive special attention. Seen from a wider perspective, it is rather important to make scholarly investigations and public debate regarding the executors of the Armenian Genocide. Even when the agents of Genocide were not explicitly mentioned, the consequences of their deeds remained all too visible to ignore them. Yet historians, that is to say those who defined it as their job to find out ‘what really happened’, over an extended period of time left it to others to deal with the issue of perpetration.

This talk focuses on one major perpetrator, Ahmed Faik Erne (1879-1967), his background, deeds, activities and leading involvement in the 1915 Armenian deportation and genocide as well as his life story in the post-genocide period in modern Turkey.

Dr. Ümit Kurt completed his PhD. in the Holocaust and Genocide Studies Program in the History Department of Clark University in 2016. His dissertation was entitled “Destruction of Aintab Armenians and Emergence of the New Wealthy Class: Plunder of Armenian Wealth in Aintab (1890s–1920s).” He is currently a research fellow at Harvard University.



Kurt has written extensively on confiscation of Armenian properties, Armenian Genocide, early modern Turkish nationalism, and Aintab Armenians. He is the author of the Great, hopeless Turkish race: fundamentals of Turkish nationalism in the Turkish homeland 1911-1916 (Istanbul: İletisim Publishing House, 2012) and editor of the Revolt and Destruction: Construction of the state from Ottoman Empire to Turkish Republic and collective violence (Istanbul: Tarih Vakfı Publishing House, 2015). He teaches history at Sabanci University in Istanbul and is the author, with Taner Akçam, of The spirit of the laws: the plunder of wealth in the Armenian Genocide (New York and Oxford: Berghahn Books, 2015).

The lecture is free and open to the public. Free parking is available, with a parking code, in Fresno State Lots P5 and P6, near the University Business Center.

For more information about the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669, or visit our website at www.fresnostate.edu/armenianstudies.

Armenian Film Society to Screen Parajanov’s “The Legend of Suram Fortress”

GLENDALE — Abril Bookstore’s Armenian Film Society will screen Sergei Parajanov’s classic film, The Legend of Suram Fortress on Friday, March 3, 2017 at 7:30 pm at Abril Bookstore – 415 E. Broadway, Glendale, CA. Admission is free.



The film will be presented by Karen Karslyan. This film screening is a prelude to the presentation of his new book, Aterazma: A Typographic Film, which will be held the following week at Abril Bookstore.

The Legend of Suram Fortress (1985, 88 min.) is about a fortress which is in a constant state of construction — that’s because it’s always crumbling just as they are about to complete it. To solve this mystery, a young man visits a fortune teller who offers a startling proclamation: For the fortress to stand, someone must be buried inside it. Soon enough, the young man realizes that this person is him.

Sergei Parajanov was born in Georgia to Armenian parents. After studying film and music, Parajanov became an assistant director at the Dovzhenko studios in Kiev, making his directorial debut in 1954. In 1964 he made Shadows of Forgotten Ancestors (1965), a rhapsodic celebration of Ukrainian folk culture, and the world discovered a startling and idiosyncratic new talent. He followed this with the even more innovative The Color of Pomegranates (1969), which explored the art and poetry of his native Armenia in a series of stunningly beautiful tableaux. But by this stage the authorities had had enough, and Parajanov spent most of the 1970’s in prison on

Asya Darbinyan to Speak at Ararat-Eskijian on Russian Response to Armenian Genocide

MISSION HILLS -- Asya Darbinyan, currently a PhD Candidate at the Strassler Center for Holocaust and Genocide Studies at Clark University in Worcester, MA, will give a talk entitled “Russia’s Response to the Armenian Genocide: Refugee Crisis at the Caucasus Front and Russian Imperial Humanitarianism,” on Sunday, February 26, 2017, at 4:00 p.m., at the Ararat-Eskijian Museum—Sheen Chapel, 15105 Mission Hills Road, Mission Hills, CA. The lecture is co-sponsored by the Ararat-Eskijian Museum and the National Association for Armenian Studies and Research (NAASR).

This lecture will analyze how the recognition of an emergency situation by Russian imperial authorities transformed political and public reaction to genocide into action—substantial Armenian relief work. “Russia” and “humanitarianism” are rarely coupled in the historical literature on the 20th century, but Darbinyan’s research emphasizes the importance of exploring imperial Russia’s response to the Armenian refugee crisis on the Caucasus battlefield during World War I. The Russian imperial government as well as a number of non-governmental organizations provided assistance to hundreds of thousands of Armenian refugees.

Drawing upon materials in military and historical archives in Moscow



and St. Petersburg, as well as in the Armenian National Archives in Yerevan, for the first time, Darbinyan’s work offers new perspective on Russian policy towards Armenians during the genocide and elucidates complexity of Russian humanitarianism during the Great War.

Asya Darbinyan is a PhD Candidate at the Strassler Center for Holocaust and Genocide Studies, Clark University. Previously, she worked at the Armenian Genocide Museum-Institute, Yerevan, as a senior research fellow and the Deputy Director of the museum (2008-2013).

For more information about this program, contact the Ararat-Eskijian Museum at (747) 500-7585 or Ararat-eskijian-museum@netzero.net, or NAASR at (617) 489-1610 or hq@naasr.org.

Armenian Cilicia Evangelical Church Raises Funds for Families of Martyred Soldiers Defending Borders of Artsakh and Armenia

PASADENA -- On Sunday, February 12, on the occasion of Valentine’s Day and utilizing Rev. Dr. Vahan H. Tootikian, Executive Director of the Armenian Evangelical World Council’s visit, the Mission and Outreach Committee of the Armenian Cilicia Evangelical Church of Pasadena, CA organized a luncheon and cultural program to raise funds for families of soldiers who lost their lives defending the borders of Artsakh and our Homeland, Armenia.

After a spiritual feast during the morning worship service presented by Rev. Dr. Tootikian, over 120 attendees congregated at the Church’s Derian Social Hall to enjoy a delicious luncheon sponsored by Vigen Shnorhokian. A short program followed the luncheon and consisted of poems and musical selections on the piano by sister/brother Arpi and Armen Samuelian. They delighted the guests by playing pieces from Aram Khachaturian, Arno Babajanian, Chopin and other famous composers.

Anet Baghdasarian, who was specially invited to participate in the program, shared her story of losing her soldier brother 20 years ago. With tears in her eyes she said how such a tragedy leads to bitterness and disconnects from God. She emphasized the



important mission of the Armenian Missionary Association of America (AMAA) reaching out to the families of those who have lost loved ones in the war defending their country, and attending not only their physical needs, but also their spiritual needs. Following Anet’s presentation, Nerses Aroyan, who served as the MC, made a special appeal to raise funds for this important mission. Over \$4,000 was raised which will be sent to Armenia through the AMAA, to help the families of these brave soldiers who lost their lives defending our Homeland.

Special thanks to Alice Terian, Chair of the Mission and Outreach Committee, for coordinating the luncheon.

almost certainly rigged charges of “homosexuality and illegal trafficking in religious icons”. However, with the

coming of perestroika, he was able to make two further films before succumbing to cancer in 1990.

«ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ» ԾՐԱԳՐԻ ՑՈՒՑԱՅԱՆԴԷՍ



Կազմակերպութեամբ Լոս Անձեյլեսի Պոլսահայ Միութեան, Յունուար 19-21, 2017 Միութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Մնացորդներ» ծրագրին նուիրուած ցուցահանդէս մը՝ մասնակցութեամբ լրագրող եւ «Ակօս» թերթի նախկին խմբագիր Արիս Նալճըի, որ նշեալ ծրագրին համակարգողն է:

Բացման խօսքը կատարեց Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, որ Արիս Նալճըի հակիրճ կենսագրականը ընթերցելէ ետք, հրաւիրեց զայն որ բացատրութիւններ տայ ցուցահանդէսին մասին:

ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԿԸ ՏՕՆԷ ԻՐ 35-ԱՄԵԱՅ ՑՈՒԲԵԼԵԱՆԸ



Շ. եւ է. Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը իր 35-րդ տարեդարձը պիտի տօնէ գեղարուեստական յատուկ յայտագիրով մը, աշակերտներու եւ շրջանաւարտներու մասնակցութեամբ: Հանդիսութիւնը՝ Պահէնք Մեր Ինքնութիւնը՝ Հայ Քրիստոնէայ բնաբանով, տեղի պիտի ունենայ Ուրբաթ օր, Մայիս 31, 2017-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Լոս Անձեյլեսի Հայ Միացեալ Աւետարանական Եկեղեցիի Աւագեան Սրահին մէջ, 3480 Cahuenga Boulevard West, Los Angeles, CA 90068: Դպրոցի ուսուցչակազմը եւ աշակերտութիւնը, մեծով-պզտիկով,

Նալճը: Բացատրեց Սվազ քաղաքին մասին թէ այնտեղ կը գտնուին 15 ընտանիքներ որոնք պետութեան հետ լաւ յարաբերութեան մէջ են: Հայոց թաղամասերէն դուրս հանուած կաւէ կարասները, որոնք թանգարանին մէջէն գտնուեցան: Խօսեցաւ Երզնկայ, Կարին, Ձիթողիկ գիւղերուն մասին:

Բացատրութիւն տուաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մասին որ մզկիթի վերածուած է: Սանասարեան վարժարանը որ պետական թանգարանի վերածուած է, եւ Ամասիոյ մէջ հայկական տուն մը որուն բնակիչները թողած եւ գացած են 1974ին եւ որ եղած է առաջին հիւրանոցը:

Նալճը շեշտեց թէ մասնաւոր ուշադրութիւն պէտք է դարձնել բանալիներուն՝ որոնք եկեղեցիներու եւ բնակարաններու կը պատկանէին:

«Մնացորդներ» ծրագրին նպատակն էր Հայոց Յեղասպանութենէն ետք պատմական Հայաստանի հողերուն վրայ լքուած հայերու կալուածները ցանկագրել: Այս նպատակով, վերջին երկու տարիներուն ընթացքին, Թուրքիոյ 27 նահանգներուն մէջ հարիւրաւորներ մասնակցած են զանազան առաքելութիւններու:

մեծ թափով լծուած են այդ յայտագրի պատրաստութեան:

Այս առիթով պիտի հրատարակուի յատուկ գրքոյկ մը, որուն մէջ տեղ պիտի տրուի ծնողներու, շրջանաւարտներու եւ Մերտինեանի մեծ ընտանիքի անդամներուն վկայութեանց կամ շնորհաւորական մաղթանքներուն: Գրութիւնները կրնան ըլլալ Անգլերէն կամ Հայերէն լեզուներով: Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք կապ հաստատել Դպրոցի գրասենեակին հետ Հեռ. 818.907.8149; E-mail: merdinian_school@yahoo.com.

Հանդիսութեան մուտքի նուէրը \$10.00 է:

ՊՈԼՍԱՅԱՅ ԵՐԳՉՈՒՅԻ ՍԻՊԻԼ ՎԵՑ ՅԱՅԵՐԷՆ ԵՐԳԵՐ ԵՐԳԵՑ ԹՐԲԱԿԱՆ ՅԵՌԱՏԵՍԻԼԷՆ



Թուրքիոյ հեռատեսիլի հեղինակաւոր TRT կայանէն Փետրուարի 19ին «Ձայներու Կանչը» յայտագրի հիւրն էր պոլսահայ շնորհակերակցութեամբ հայ երաժիշտներէ բաղկացած նուագախումբին, յաջորդաբար երգեց «Իմ Անուշ Տաւիղ», «Կիլիկիա», «Նազանի», «Նամակը», «Սարի Կէլին» եւ «Արեւիդ Մեռնեմ» երգերը: Ելոյ-

թի պահուն պատասխին վրայ թրքերէնի կը թարգմանուէին երգին հայերէն բառերը:

Հաղորդաւար Սէյթան Չաղըը՝ չի հետ կատարուած գրոյցի ընթացքին շնորհակալութիւն կը յայտնէր Սիպիլին որ կը ծանօթացնէր այս երգերը: Իսկ Սիպիլի ցաւ կը յայտնէր որ երկրի ժողովուրդը գաղափար չունէր այդ երգերէն, որոնք ծնունդ առած են նոյն հողերէն:

ԴԱՇՆԱԿԱՅԱՐ ԱՐՄԵՆ-ԼԵՒՈՆ ՄԱՆԱՍԱՐԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՆԴԻՍԱՑԱԻ ՄԱԼԹԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՅԹԻՆ

Մ ա լ թ ա յ ի մայրաքաղաք Վաշինգթոնի մէջ վերջերս տեղի ունեցաւ դաշնակահարներու միջազգային 5րդ մրցոյթը, ուրուն աւարտին Արմէն-Լեւոն Մանասարեան արժանացաւ առաջին պատուոյ մրցանակին եւ բաժակին: Յատկանշական է որ մրցոյթի դատական կազմին (Ժիւրի) կը մասնակցէին 22 երկիրներու դաշնակահարներ Մալթա՝ յէն, Չինաստանէն, Պուկարիայէն, Լատվիայէն, Լիտվայէն, Հունգարիայէն, Փորթուկալէն, Ալպանիայէն, Աւստրիայէն, Պելճիքիայէն, Հայաստանէն, Ճաբոնէն, Թայլանտէն, Ռուսիայէն, Ուքրանիայէն, Մեծն Բրիտանիայէն, Լեհաստանէն, Սերպիայէն, Պելառուսիայէն, ԱՄՆ-էն, Իտալիայէն եւ Սլովենիայէն:



Արմէն-Լեւոն Մանասարեան միջազգային եւ հանրապետական բազմաթիւ մրցոյթներու դափնեկիր եւ մետալակիր է: Շրջանաւարտ է Երեւանի Կոմիտասի անուան Երաժշտանոցին եւ այժմ իր ուսումը կը շարունակէ Պելճիքիայի Լիէթ քաղաքի թագաւորական երաժշտանոցին մէջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐՕ ՏԱՏԱՆԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՍՐՈՆԻ ՏՕՐԷՆ

Պուէնոս Այրէսի Սերվանդէսի անուան ազգային թատրոնի գլխաւոր տնօրէն նշանակուած է հայագրի Ալեքսանդրո Տատանեանը: Ազգային թատրոնը Արժանթինայի միակ ազգային թատերական հաստատութիւնն է եւ այստեղ հանդէս եկած են սպանախօս աշխարհի շատ ու շատ արուեստագէտներ: Այդ յայտնիներէն մէկն է երգիչ, դերասան, բեմադրիչ, արուեստագէտ եւ թատերական գործերու հեղինակ Ալեքսանդրո Տատանեանը: Միաժամանակ ան իր գործունէութեան մէջ իր ուշադրութեան առարկան դարձուցած է երգարուեստին: Ոչ միայն անձնապէս հանդէս եկած է իր կատարումներով, այլեւ կազ-

մած է առանձին ծրագիրներ, որոնք յաջողութեամբ իրականացուած են Պուէնոս Այրէսի եւ այլ քաղաքներու մէջ:

Որպէս բեմադրիչ ան տասնեակ մը գործեր ներկայացուցած է Շէքսպիրէն մինչեւ Պերթոլա Պրեխտ եւ սպանացի Գոնսեսիերո: Բազմաթիւ են իր օփերային գործերը, որոնք ներկայացուած են ոչ միայն Պուէնոս Այրէսի, այլեւ երկրէն դուրս: Ան մասնակցած է աւելի քան 60 միջազգային տարբեր փառատօներու, արժանանալով բազմաթիւ մրցանակներու: Իր առանձին գործերը թարգմանուած են փորթուգալերէն, անգլերէն, իտալերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներու:

ՄԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ Գ.

ՈՍԿԱՆ ՄԻՆԻՑԱՐԵԱՆ

Հարիւրամեակ մը անշուշտ բաւական չէր որպէսզի մոռացութեան տրուէր հայ ժողովուրդին ցեղասպանութիւնը, եւ ո՛չ ալ յաջորդ հարիւրամեակը կրնայ մեզի մոռցնել տալ մեր ցիրուցան ժողովուրդի արհաւիրքներն ու տառապանքները՝ այնքան ատեն որ չենք վերատիրացած մեզմէ յափշտակուած հողերուն եւ անոնց վրայ տակաւին կանգուն մնացող հողերուն, որքան ատեն որ չենք հատուցուած յաւէտ կործանուած, կորսուած, փճացած մեր նիւթական թէ՛ հողմտաւոր հարստութեանց համար, եւ արդարութիւնը վերջնականորէն չէ վերականգնած: Պատմութիւնը կարելի չէ չարափոխել, ինչ որ այսօր կը փորձեն կատարել թուրք պատմաբաններ, ո՛չ ալ կարելի է դա՛ն մոռնալ կամ ուրանալ, որովհետեւ արձանագրուած է ան ո՛չ միայն մեր ժողովուրդի յիշողութեան մէջ, այլեւ շատ յաճախ բազմաթիւ օտար լեզուներով՝ բազմահարկ հատորներու մէջ, ականատեսներու պաշտօնական եւ վաւերական անհրաժեշտ վկայութիւններով:

Թուրք պետութեան ղեկավարութեամբ եւ քաջալերանքով բազմաթիւ հատորներ հրատարակուեցան անցեալին, հրքելու համար հայոց ցեղասպանութիւնը: Թուրքեր գիտեն ստել, նենգափոխել ճշմարտութիւնը ու կը փորձեն համոզել եւ խաբել նամանաւանդ օտարները, որոնք այդքան ալ քաջածանօթ չեն հայ ժողովուրդի պատմութեան: Բոլորիս ծանօթ է որ թուրքը հանրային կարծիքին կարեւորութիւն չի տար: Բայց կրնա՞յ ըլլալ որ օտար պատմագիրներ եւ դիւանագէտներ հաւատան յօրինուած նոր սուտերուն եւ թրքական նոր աղբիւրներու տեսակէտներուն:

Քաջածանօթ ենք թուրքական նորելուկ պատմագրութեան, ուր յաճախ կը կրկնուի, թէ հայերն են որ թուրքերուն ջարդած են, թէ Արեւելեան վեց նահանգները հազարամեակներէ ի վեր թուրքին հայրենիքը եղած են, բայց ո՛չ երբեք հայկական: Ու նման պատմական այլանդակութիւններով կը փորձեն հանրային կարծիք ստեղծել: Պատմական աղբիւրներ կը վկայեն, թէ հայ ժողովուրդը Արեւելեան նահանգներուն մէջ ո՛չ միայն ապրած է հազարաւոր տարիներէ ի վեր, այլեւ մշակած, պահպանած ու թագաւորութիւններ հաստատած է այդտեղ:

Միջազգային արժէք ներկայացնող բազմաթիւ օտար պատմագէտներ հսկայ գրադարան մը լեցնելու չափ հատորներ հրատարակած են հայոց ծագումին, մշակութիւնն ու լեզուի մասին: Բոլորն ալ անխտիր կը վկայեն թէ այդ նահանգները անգիր ժամանակներէ ի վեր հայ ժողովուրդին հայրենիքը եղած են: Այստեղ կ'արժէ յիշատա-

կել Ֆրանսացի պատմաբան Ժաք տը Մորկանի հետեւեալ յայտարարութիւնը. «Հայաստանի մէջ գտնուեցան առաջին անգամ ըլլալով պղինձն ու երկաթը եւ հոն է որ ծնունդ առաւ երկաթի ճարտարարուեստը քան զար առաջ՝ նախ քան Քրիստոս: Մինչ Ասիոյ խորերէն եկած թուրքերը Հայաստան մտան 14-րդ դարէն ի վեր միայն»:

Առաջին համաշխարհային պատերազմին, կարան ու Արտահանը մաս կը կազմէին «Ռուսական» Հայաստանին, եւ միայն 1922-ին էր որ բռնազրուակեցան թուրքերէն: Մինչ միւս չորս նահանգները հայոց տրուեցան Սելէրի դաշնագրին 89-րդ յօդուածին համաձայն: Անվիճելի իրողութիւն է, որ վերոյիշեալ վեց նահանգները աւելի քան երեք հազար տարի մաս կազմած են Հայաստանի, իսկ եթէ այսօր հայեր չկան այդտեղ, պատճառը հալածանքներն ու ցեղասպանական անմարդկային ջարդերն են: Պիտի եզրակացնենք ըսելով. արդար իրաւունք մը չի՝ կրնար ոճիրով խլուիլ:

Վերեւ յիշատակուած դառն իրականութիւնները, մեզի ըսել կու տան, թէ մեր ազգային իրաւունքներուն ու դատին գոհացուցիչ լուծումը շատ աւելի դժուար կացութեան մէջ կը գտնուի այսօր, որովհետեւ Թուրքիան քաղաքական թէ գիւտաբանական պաշտպանութիւնը կը վաճէ՛ Նաթօյի երկիրներուն եւ նամանաւանդ Միացեալ Նահանգներուն, որոնք առատաձեռնորէն կը զինեն զայն, զանգան հաշիւներով: Չմոռնանք յիշեցնելու այստեղ, թէ բռնազրուակուած հայկական հողերու վրայ կան այսօր եւրոպական եւ մասնաւոր աճերի կեանքներ գիւտաբանական կայաններ:

Այս բոլոր տուեալներով հանդերձ, մեր իրաւունքը, մեր դատն ու պահանջները կը մնան անփոփոխելի: Թէ ե՞րբ կ'իրականանան մեր պահանջները, այդ ալ ժամանակը ցոյց կու տայ: Կարեւորը ա՛յն է որ մենք չյուսահատուինք, որովհետեւ յուսահատութիւնը ժողովուրդներու համար կորուստի նշանակու-

թիւն ունի: Այսօր մեր պայքարը քաղաքական է, որովհետեւ գէնքով կարելի չէ լուծել այդ դատը: Պէտք է արմատացնել մեր մէջ այն համոզումը՝ թէ այնքան ատեն որ հայրենայ մաքրուիլ իր ոճրագարտ ժառանգութեանէն, տխուր անցեալէ մը, առանց գոհացում տալու հայկական պահանջներուն:

Վեց դարերու դաժան տիրապետութեան մինչեւ Ապրիլ 24-ը՝ թուրքեր մեզմէ անհամեմատօրէն զօրաւոր եղած են, նամանաւանդ անօրէն եւ անողորմ: Անդադրում հալածանքներ մեր ժողովուրդի կեանքը վերածած են դժոխքի. չկար կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւն: Զրկուած՝ գէնքով դիմադրելու կարելիութիւններէն, ո՛չ այդքան խորամանկ եւ դիւանագէտ՝ որքան թուրքը, հայը զգացականօրէն կը մօտենար ազգային հաւաքական գործերուն: Քաղաքական գործերու մէջ մեր բացարձակ անփորձութիւնը չէր կրնար սատարել մեր արդար դատի յաջողութեան:

Դժբախտաբար այսօր, մեր արդար դատին եւ հողային պահանջներուն ամենատկար կողմը մեր թիւին բացակայութիւնն է հայրենի հողին վրայ: Իրողութիւն մը, որ մեզ պէտք է մղէ համախմբուելու եւ լրջօրէն մտածելու թէ ինչպէ՞ս կրնանք զարթօնք մը սկսիլ բռնազրուակուած հայկական գաւառներուն մէջ, թէկուզ թրքացած եւ քրտացած հայերով: Իսկ այս բոլորը իրագործելի կը դառնան ո՛չ թէ ճառերով, այլ քաղաքական կեանքի մէջ ցուցաբերելով մեր ոյժն ու գիտական-նիւթական միջոցները, առեւտրական շահեր ապահովելով մեր դատի կողմնակիցներուն:

Աշխարհը մղող ոյժը այսօր առեւտրական շահերն են, որովհետեւ բոլոր Արեւմտեան կառավարութիւնները կ'ենթարկուին շահամոլական պայմաններուն: Օրինակի համար, վերջին Համաշխարհային պատերազմին, ամերիկեան ընկերութիւններ քարիւղ հայթայթեցին Ճափոնին: Նոյն շրջանին, դարձեալ, ամերիկացի ճարտարագէտներ աշխատեցան ճափոնական նաւերու վրայ, որոնք յետագային

յարձակեցան Միացեալ Նահանգներու պատերազմական նաւատորմի դին վրայ եւ մահացու հարուած տուին անոր՝ Փըրլ Հարպըրի մէջ: Նոյնը ըրաւ Գերմանիան: Նկատի ունենալով որ բաւականաչափ քարիւղ չունէր պատերազմի ընթացքին, Սպանիոյ ճամբով, ի շարս կենսական այլ ուղղանիւթերու, Փորթուգալի մէջ հաստատուած Անգլիական ընկերութիւններէն կը գնէր հարկ եղած քարիւղը: Նոյնը ըրին ամերիկեան մեծ ընկերութիւններ, որոնք քիմիական ապրանքներ ծախեցին Գերմանիոյ: Եւ այս բոլորը զանազան պատրուակներով ծածուկ պահուեցան, որովհետեւ առեւտրական շահերը ամէն բանէ վեր կը մնան:

Վերեւ յիշատակուած իւրանքաչիւր նկատողութիւն, պէտք է մեզի աւելի տայ անդրադառնալու եւ իրատես դառնալու, թէ ինչո՞ւ հայ ժողովուրդին արդար դատը հատուցում եւ լուծում չստացաւ, եւ որպէս լքուած ժողովուրդ՝ ստեղծուեցաւ սփիւռքը: Ահաւասիկ հասունութեան կոչը հայ ժողովուրդին, թէ ժամանակը հասած է ստեղծելու ներկայացուցչական համազգային կեդրոնական մարմին մը, առանց հատուածական, կուսակցական, շարանուական խտրութեան, հողային եւ հատուցումի արդար պահանջներ ներկայացնելու Թուրք կառավարութեան:

Ապրիլ 24-ի հարիւրամեակը, մեզմէ իւրաքանչիւրին վրայ կը դնէ բարոյական պարտականութիւն մը՝ անկեղծօրէն եւ իրատեսօրէն մտածելու ապագայի մասին, նամանաւանդ երբ ճերմակ ջարդը լրջօրէն կը սպառնայ սփիւռքին: Նայելու ենք ներկային՝ պատրաստուելու համար մեր ապագան, որոշելու թէ ի՞նչ պարտինք ընել եւ ի՞նչ կրնանք ընել կեդրոնացած միացեալ ոյժերով: Ինչ որ մինչեւ այսօր իրագործեցինք սփիւռքի մէջ, հոյակապ իրագործումներ են, անհրաժեշտ վկայութիւններ են մեր ազգային վճռակամ տոկութեան, վերապրելու եւ գոյատեւելու յստակ առաջադրութեամբ, եւ սակայն... տակաւին շատ բան ունինք ընելիք:

Վերադառնանք մեզմէ յափշտակուածներուն:



HOMENMEN MEZA NIGHT

MAGIC OF FLAVORS
Join to support HoMenMen Soccer Team
Variety of delicious homemade food, drink, live music with famous Organist **Hovig Naccashian**; Singing **NAREG KHOKOZIAN** - One of HoMenMen's best soccer players, **DJ** - Maximum entertainment all night guaranteed.
Saturday, April 1st 2017 starting @8:30pm
ADDRESS: **AEBU - GARO SOGHANALIAN HALL**
1060 N. ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
Entrance Donation \$30; Reserve your seats at: 818-384-2987 or 626-354-5924

Մեզէի ԵՐԵՎՈՅ - Կախարդական Համեր

Կազմակերպութեամբ
ՀՄՄ ֆուրայդային ակումբի

Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 1 Ապրիլ 2017 երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ:
ADDRESS: 1060 N. ALLEN AVENUE PASADENA, CA 91104
Մուտքի նուէր՝ \$30
Տեղերը ապահովելու համար, հրոնձայնել՝ 818-384-2987 կամ 626-354-5924



Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերօրին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԻՐԱՔԻ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ (1911-2011)

Հեղինակ՝ Համբարձում Աղպաշեան

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Դեկտ. 2016-ին Կլենտելի մէջ, «Երեւան» տպարանէն լոյս տեսաւ, իրաք ծնած և վերջին քանի մը տարիներուն Կլենտել խոստատուած ծանօթ հրատարակագիր-մտաւորական՝ Համբարձում Աղպաշեանի վերոնշեալ շնորհակալ գործը:

Շնորհակալ գործ ըսենք, քանի որ այս միութեան հիմնադրութենէն ի վեր, նման գործ մը չէ եղած: Վերջին տասը-տասնըհինգ տարիներուն, միութեան վարչութիւնը այդ ուղղութեամբ շատ համեստ աշխատանքն մը տարաւ, բայց զանազան պատճառներով այդ գործը չչարունակուեցաւ:

Հեղինակը իրեն մօտ պահուած բոլոր տեղեկութիւնները Ա.Մ.Ն. հետը բերելով, խղճամիտ աշխատանքով և նուիրումով այս աշխատանքը նման հատորին հասցուց:

Համբարձում Աղպաշեան եղած է բեղուն գործիչ մը, իր նպաստը բերելով իրաքահայ գաղութի եկեղեցական և միութենական կեանքին: Մաս կազմած է բազմաթիւ փորձագիտական և ազգային կազմակերպութիւններու: Եղած է Հ.Բ.Ը.Միութեան Օհան ակումբի վարչութեան անդամ, Հայ Առաքելական Եկեղեցու մշակութային յանձնախումբի անդամ:


Իրաքի Հ.Բ.Ը.Միութիւնը, ինչպէս շատ մը երիտասարդներու համար, Համբարձում Աղպաշեանի համար ալ եղած է անոր ազգային կեանքի մկրտութեան ավանդ: Իր ընտանիքի և այս միութեան հայաբոյր և հայրենասիրական ջերմ մթնոլորտին մէջ ձևաւորուեցաւ և կազմուեցաւ Աղպաշեանի ազգային կեանքի նկարագիրը: Ան պաշտելու աստիճան սիրեց իր ժողովուրդը, Հայրենիքը, Եկեղեցին ու մանաւանդ հայ մշակոյթը: Ան խորապէս կը հաւատայ, որ իրաքի Հ.Բ.Ը.Միութիւնը եղած է և մինչեւ օրս ալ կը մնայ իրաքի հայութեան համար որպէս մեծ օրհնութիւն, և այս գործը Համբարձում Աղպաշեանի սիրաջերմ զգացումներուն արդիւնքն է:

Հեղինակը այս գործը նուիրած է իր Զէյթունցի հօր՝ Մինաս Աղպաշեանին, որ 11 տարեկանին բռնի գաղթած է Զէյթունէն, Տէր-Զօրի անապատին մէջ կորսնցուցած է ողջ ընտանիքը և խնամուած է Մուսուլի որբանոցին մէջ, որ կը վայելէր Հ.Բ.Ը.Մ.ի հովանաւորութիւնը:

Գիրքին մէջ հեղինակին կողմէ գրուած յառաջաբանին մէջ, ան կը լինի թէ ինչո՞ւ համար այս Յուշամատեանը գրուած է:

Ապրիլ 15, 1906-ին Գահիրէի մէջ հիմնուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, հինգ տարի ետք՝ 1911-ին իրաքի մէջ հիմը դրուեցաւ իրաքի Հ.Բ.Ը.Միութեան: Այդ թուականէն ի վեր միութիւնը՝ շնորհիւ իր լուսամիտ, շրջահայեաց ղեկավարութեան, անմիջապէս գործի անցաւ Արեւմտեան Հայաստանի մէջ ապրող հայութեան օգնութեան հասնելու համար: Իրաքը ամէնէն մօտ երկիրն էր Արեւմտեան Հայաստանի հայութեան:

Յեղասպանութեան տարիներուն մեծ թիւով հայեր Սուրիա և



Իրաք եկան՝ Տէր-Զօրի անապատներէն անցնելով: Բարեգործականը այդ գաղթականներուն ապահոված է սնունդով, վրաններով և այս միութիւնը շարունակած է այդ գործը մօտ 10 տարի անվճար կերպով պահելով, որբացած աշակերտութեան ճիւղ ուսում և տաք կերակուր տալով:

Միութիւնը շրջան մը (1948-1959) դադարեցաւ քաղաքական պատճառներով: 1959-էն ի վեր նոր թափով և բեղմնաւոր աշխատանքով շարունակեց և կը շարունակէ իր ծառայութիւնները իրաքահայ գաղութին: Այսօր այս միութիւնը իրաքահայութեան ծանրակշիռ միութիւններէն մէկն է, իրաքահայ գաղութի պարծանքն է:

Համբարձում Աղպաշեան գիրքին մէջ կը լինի, թէ ինք դժուարութիւն ունեցած է առաջին շրջանի 1911-էն մինչեւ 1948-ին, հերոսավայել ծառայութիւններ մատուցող անձնուրաց և նուիրեալ ղեկավարներուն անունները լրիւ ունենալ, անոնց գործունէութեան մասին տեղեկութիւններ հաւաքել, բայց քաջ զիտէ թէ ինչպիսի աստուածահաճոյ գործ ըրած են այս միութեան հիմնադիրները մեր ժողովուրդին համար, այնուհանդերձ հատուկեմտ տեղեկութիւններ կրցած է ունենալ Հ.Բ.Ը.Միութեան «Ոսկեմատեան Հ.Բ.Ը.Մ.ի 1906-1931 Ա. հատոր, Փարիզէն»:

Նմանապէս, հակառակ որ երկրորդ շրջանին, դարձեալ գրաւոր շատ արխիւներ չկան, բայց գոնէ անդամներէն շատերը տակաւին ողջ են, անոնցմէ կրցած է հաւաքել երկրորդ շրջանի տեղեկութիւններ, գոյութիւն ունեցող ատենագրութիւններու և անդամներու մօտ եղած նկարներէն օգտուելով:

Գիրքին մէջ շատ շահեկան տեղեկութիւններով տուած է իրաքի պետութեան և իրաքահայ գաղութի պատմութեան մասին:

Ապա, հեղինակը տուած է իրաքի Հ.Բ.Ը.Միութեան պատմութիւնը, երկու մասի բաժնելով զանոնք:

Առաջին մասը (1911-1958) և երկրորդ մասը 1958-էն մինչեւ հիմա:

Այս երկու բաժիններով հեղինակը կուտայ Միութեան գործունէութիւնները, վարչութեան անդամներու, ատենապետներու և փոխատենապետներու, մասնաճիւղերու

ՎԱՐԴԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ



ՎԵՐ. ՅՈՎԱՍԹ ՄԱԹՈՍԵԱՆ

Հայ ազգը արդարօրն հպարտ է իր անցեալով, հպարտ է իր կարկառուն դէմքերով՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչով, Սուրբ Սահակով եւ Սուրբ Մեսրոպով:

Մեր հպարտութիւնը իրաւացի է, որովհետեւ մեր նախնիքները արտաբերած են ճշմարիտ ազգասիրութիւն՝ հիմնուած ճշմարիտ Աստուածասիրութեան վրայ: Որպէս Աստուածատուր իրաւունք՝ հայ ժողովուրդի սրտին մէջ տրուած է ազատութեան տենչը եւ պողպատեայ կամքով՝ թշնամիին կողմէ քանդուածը վերաշինելու շնորհը վայելած է:

Մեր հայրերը ամենադժուար եւ աննպաստ պարագաներու առջեւ խիզախ կեցուածք ցոյց տուած են, դիւցազնօրէն կուրծք պարզած՝ փոթորիկներն եւ անկարելի կարելի դարձուցած՝ վստահելով եւ ապահւնելով Ամենակարող եւ Ամենազօր կենդանի Աստուծոյն:

Պատմութիւնը ծանօթ է բոլորիդ՝ թէ ինչպէս երկարատեւ հաւածանքէ ու ահռելի նեղութիւններ կրելէ ետք, Աստուածային միջամտութեամբ՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչի անխոնջ աշխատանքը պսակադրուեցաւ՝ թագաւորական հրովարտակով եւ հայ ազգը 301 թուին, պաշտօնապէս ընդունեց քրիստոնէութիւնը որպէս ազգային կրօնք:

Այս շրջանին երեւան եկան հայ քրիստոնեայ տիտաններ, որոնց նուիրական աշխատանքով քրիստոնեայ նկարագիրը դրոշմուեցաւ հայու հոգիին մէջ:

Ապա փայլուն էջեր գիրար յաջորդեցին՝ հայոց պատմութեան մէջ, ինչպէս Մեսրոպ Մաշտոցը, գիրերու գիւտը եւ Ասատուածշունչի մեր մայրենի լեզուին թարգմանաւորը, որ նոր էջ մը բացաւ մեր պատմութեան մէջ:

Յաջորդող դարերու ընթացքին՝ երբ մէկ կողմէ սքանչելի յաջողութիւններ ձեռք կը ձգուէին, միւս կողմէ, թշնամին՝ Պարսից Յակոբ Արքայից Արքան կը գործածէր մեր կրօնափոխ ընելու եւ մեր գտած գանձը մեր ձեռքէն յափշտակելու:

Դժուար օրեր էին, երբ Յովսէփ Կաթողիկոս, 18 եպիսկոպոսներով եւ 18 աւագ իշխաններ եւ նախարարներով Արտաշատի մէջ ժողով կը գումարէին, եզրակացնելով որ՝ եթէ Արքան գիրքնք կրօնքով ազատ ձգէր, երկրի վրայ իրմէ գատ թագաւոր պիտի չունենային եւ երկիրնքի մէջ Քրիստոսը պիտի պաշտէին: «Մեր հարստութիւնը ձեռացող մէջն է եւ մեր մարմինները»

ըր քու առջեւ, քեզմէ տանջանք, մեզմէ համբերել...» կը գրէին Արքային:

Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրանի մէջ երկարատեւ խօսակցութիւններ ետք, հայ նախարարներ նոյնիսկ համաձայնեցան երեսանց ուրանալ իրենց հաւատքը եւ կուսապաշտութիւնը ընդունիլ, որոշելով որ երբ հայրենիք վերագոնարին, իրենց արիւնով պիտի պաշտպանէին իրենց կրօնքը: Եւ իրաւ ալ, երբ Հայաստան հասան, հայ կղերներու, փափկասուն տիկիներն եւ երիտասարդ բանուորները խումբեր յարձակեցան գիրքնք արեւաշտութեան վարժեցնող մոզերուն վրան եւ վտարեցին զանոնք հայրենի հողերէն:

Եւ ահա Յակոբ Ա. 451ի գարնան, պարսկական բանակը մեծ զօրութեամբ Հայաստան կը դրկէր, բռնի ոյժով խոնարհեցնելու հայ ժողովուրդը եւ զայն կուսապաշտ դարձնելու համար:

Թշնամիին դիմաց կը կանգնէր հայ բանակը՝ իր սպարապետ Վարդան Մամիկոնեանով, որ իր գինուորները կը քաջալերէր անոնց համոզելով որ իրենց պատերազմը նիւթի եւ երկրաւոր փառքի համար չէր, ոչ ալ պատիւ վաստակելու համար: Անոնք գաղափարի եւ կրօնքի պաշտպանութեան համար կը կուռէին եւ յաղթէին կամ պատուէին՝ փառքը Աստուծոյ էր:

66,000ոց բանակ մը անշուշտ կարող չեղաւ 300,000ի դէմ ֆիզիքական յաղթանակ տանիլ, բայց Աւարայրի դաշտին վրայ, հայ մարտիկներ եւ անոնց գլխաւորը՝ Վարդան, իրենց արիւնը թափեցին՝ մեր ժողովուրդին համար հոգեւոր նշանակալից յաղթանակ մը ապահովելով:

Վարդան կը կանգնէր առջեւ որպէս ճշմարիտ եւ տիպար քրիստոնեայ: Անոր համար քրիստոնէութիւնը արտաքին հանդերձ չէր որ պարագաներուն համեմատ փոխուէր: Անոր հաւատքը իր արեան մէջ թափանցած էր: Ան ապրեցաւ եւ մեռաւ Քրիստոսի համար:

Վարդան ճշմարիտ ազգասէրն էր, որ ոչ թէ լոկ խօսքով այլ գործնականապէս փաստեց իր սէրը ազգին հանդէպ: Երբ կարելի էր ապահով անկիւն մը հեռանալ եւ գինուորական կեանքի ճոխութիւնները վայելել, ան նախընտրեց կուռի դաշտ իջնել եւ առջեւ գիծերուն վրայ կանգնիլ, որպէս մեծագոյն անձնուէրը:

Վարդան քաջ մարդ էր: Իր քաջութիւնը սակայն իր բազուկէն

ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ (Բ.)

ՎԱՐԱՆ ԲԱՅԱՐԵԱՆ (Շարունակուած Գախորդ թիւն)

2008 թ. Դեկտեմբերի 12-14 Հայաստանում կազմակերպուեց Հայրենադարձութեան հիմնա-խնդրին նուիրուած 3-օրեայ միջազգային գիտաժողով՝ «1946-48 թթ. Հայրենադարձութիւնը եւ դերազան-րը. Հայրենադարձութեան հիմ-նախնդիրներն այսօր» թեմայով: ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը նշեց.

«Գիտաժողովին խաձեռնու-մընպատակունիվերլուծելանցեալի-բոլորսխալները, բացերը, դասերը, լսել բոլոր մասնագէտներին եւ ճիշտ եզրակացութեան գալ»:

ՀՀ մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանն իր ողջոյնի խօսքում նշեց, որ «առաջին հերթին պէտք է ժողովրդավարական, իրաւական Հայրենիք ստեղծել, եթէ մարդու իրաւունքների իրավիճակը մնա այնպիսին, ինչպիսին կայ, ապա, օրինակ, Ֆրանսայից Հայը չի փորձի գալ Հայաստան»: Հարց տանք պոն. Յարութիւնեանին. Բայց ինչու միայն Ֆրանսայից...:

Գիտաժողովում ելոյթ է ունեցել նաեւ ՄԴԿ-ի սիրիահայ մշակութային եւ ազգային գործիչ, բեմադրիչ Կարպիս Լեփեջեանը: Նա նշում է. «...տակաւին կան հայեր, որոնք կը նախընտրեն ապրիլ Հայրենիքի մէջ: Անոնց թիւը աճեց Կարգապահութեան ժողովի գաղտնիքի մէջ: Մանաւանդ, որ անոնք կ'ուզեն ապրիլ ազատ-անկախ եւ ժողովրդավար Հայաստանի մէջ, սակայն անոնք մտավախութիւն մը ունին, կասկած մը, որ միգրացի անվտանգութիւնն է, միգրացի 46-էն ի վեր չսպիտակեցած վերք մըն է, միգրացիստայնութեամբ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի անհարթութիւնն է, կամ սոցիալական բեւեռացումն է, ուր աչք կը ծակեն հովանաւորեալ վերջէն հարստացածներու ճիւղերու շարահանները, իրենց 5-10 հոգեանոց թիկնազօրքերով: Թերեւս Հայաստանէն մինչեւ օրս թափ առած արտագաղթին է: ... Եկէք սփիւռքահայ երիտասարդի հոգեբանութեամբ դատենք, թէ ան ինչպէս պիտի ընդունի հայրենի հողի ազատագրմանն իր կեանքը նուիրած հերոսի քաղաքացիութիւն ստանալու մերժումը Հայրենի իշխանութիւններուն կողմէ, ինչ է, Նիճերիայէն կամ Գոնկոյնէն եկած ֆուտբոլիստը աւելի կարեւոր է Հայաստանին... Մեկնաբանութիւնները ձեզի կը թողում» (էջ 13):

Նշենք նաեւ վերջին տարիներին Լոս Անճելոսում լոյս տեսած մի քանի յօդուածներ Նշան Ճիգնէեանի ստորագրութեամբ.

1. «Հայրենադարձութիւն» 8. «Հերթերի մեջ վէճեր էին տեղի ունենում: Հայրենադարձները սովոր չէին այս պայմաններին, արտասահմանում փողով կարելի էր ամեն ինչ ունենալ: Այս անսովոր վիճակը յաճախ տեղիք էր տալիս դժգոհութիւնների, յուսահատութեան կցկտուր խօսքերի...: Տեղացիները չէին համբերում, յարձակում էին՝ անգոսայ, լկտի արտայայտութիւններով.

-Ախպար շներ, ձեր ետեւից կարմիր խնձոր էինք ուղարկել, եկաք մեր հացը կտրեցիք, նաւը խորտակուէր, եւ այլև...
Ծաղրում էին.
-Եկաք պատերի տակից հաւ-

կիթ հաւաքելու, եւ այլ չիմար խօսքեր:

Առանց այն էլ, ֆիզիքապես եւ բարոյապէս ընկճուած ժողովրդին այս խօսքերը ազդում էին, գիշերօթիկ լացում էին, անիծելով թուրք գազաններին:

Սրան յաջորդեց 1949 թ. Յունիս-Յուլիս ամիսներին իրականացուած ստալինեան օկուպանաքարը: Խօսել անգամ չէին թողնում. ծախուած մարդիկ անմիջապէս տեղ էին հասցնում, գիշերով գալիս տանում էին Ալթայի երկրամաս, «տրպիկ»՝ արեւադարձային անտառներում, Չրառատ գետերի ափերում «գազար» ընդունելու» (էջ 11):

2. «Հայրենադարձութիւն դէպի «Արեւադարձային» Ալթայ» 9. «Մի օր եկան: Մեքենան կանգնեց մեր շէնքի մուտքի մօտ, լսուեց գինուորների սապօղների ձայնը, բարձրացան եւ թակեցին մեր բնակարանի դուռը: Մենք խիտն գարթնեցինք, առանց հը էլ «սուտքուն» էինք դրել: Հայրս գունատվել էր, հազիւ շնչում էր. հարցերը լուծուած էին, պէտք է ճանապարհուէինք: Հրաշք պատահեց: Զինուորները թակեցին մեր հարեանի դուռը, որը տեղացի, գերի ընկած մարդ էր. միայնակ էր: Տարան: Նա էլ կորաւ հազարաւոր մարդկանց հետ» (էջ 11):

3. «Ներգաղթ եւ արտագաղթ (հայրենադարձի յուշերից)» 10. «Մի քանի խոսք արտագաղթի պատճառների մասին: Իհարկէ սոցիալ-տնտեսական ֆակտորը (ազդակը) ունեւ իր հական ազդեցութիւնը: Հայրենադարձների մեծ մասը, կարծես ընտանիքի «խորթ գաւակներ» լինէին, նրանց հետ հաշուի չէին նստում, պետական, կուսակցական պաշտօններ չէին տալիս, մեծ մասը ապրում էր կղզիացած, անշուք, այն հարցերը, որոնք լուծելու համար ամիսներ էին պահանջում, տեղացի հայերը լուծում էին վայրկեաններ ընթացքում... Այս խտրականութիւնը հովանաւորում էր պետական-կուսակցական աշխատողների կողմից. նրանք էին տալիս տեղացիներին ամէն քայլափոխին «ախպար» ասելու: Պետական իշխանաւորները, եթէ ուզեցան, կարող էին նրանց բերանը փակել, ստիպել, որ պապանձուէին» (էջ 6):

Աքսորուեց նաեւ Արտաշէս Տօնապետեանը (տե՛ս «Աթուրում եղած որբերը»), որը Ռասա-էլ-Աննում հրաժարական տուեց դաշնակցութիւն կուսակցութիւնից: 1946 թ. Հայաստան ներգաղթելուց յետոյ, երկու երեխայով (Վերգինէ եւ Արաքսի) չորս հոգանոց ընտանիքին տեղաւորում են Ախտայի շրջանի Ռնդամալ գիւղը: 1948 թ. ծնւում է երրորդ երեխան՝ Ստեփանը: 1949 թ. աքսորի նախորդող օրերին Արտաշէսին կանչում են Գիւղխորհուրդ եւ առաջարկում են համագործակցել իրենց հետ՝ ներգաղթողների հակախորհրդային խօսակցութիւնները փոխանցել իրենց: Պարզ է, որ նրանք գիտէին նրա դաշնակցական լինելու մասին: Արտաշէսը հրաժարում է, ասելով, որ ինքը չի կարող այգպիսի արարք կատարել: Յաջորդ օրը նրա ընտանիքին սեւ մեքենայով տանում «լցնում են»՝ ապրանքատար վագոնները եւ բախտակիրների հետ աքսորում Միլպի: Նրանց տեղաւորում են Ալթայի երկրամասի Բարնաուլի շրջանի Զերնօգիւղում՝

գետնափորաններում: Արտաշէսին աշխատանքի են տեղաւորում աղիւսի գործարանում, իսկ կնոջը՝ կոլտնտեսային դաշտում: Այնուհետեւ տուն են կառուցում աքսորեալների համար եւ նրանց յատկացնում են մի սենեականոց բնակարան: Բոլոր աներում նաւթով լամպ են օգտագործում, էլեկտրականութիւն չի եղել: 1951 թ. ծնւում է մի տղայ, որի անունը դնում են Վրէժ: Աշխատում են կամաց-կամաց յարմարուել պայմաններին, բայց դժբախտութիւնը չի ուշանում: 1954 թ., մի օր սեղանի վրայ դրուած լուսաւորող լամպը տրաքում է ու տեղում երկու երեխաները՝ Վերգինէն եւ Վրէժը վառուած, մահանում են՝ ծանր կորուստ պատճառելով ընտանիքին: Ստալինի մահից յետոյ, 1957 թ. վերադառնում են Երեւան-Մալաթիա ու շարունակում են իրենց կեանքը: Այժմ Ստեփանը ապրում է Լոս Անճելոսում, որի պատմածն էլ ներկայացրեցի ընթերցողին ամփոփ կերպով: Չեմ կասկածում, որ ներգաղթի մասին շատ է գրուել Հայաստանում եւ սփիւռքի այլ գաղթավայրերում:

Բոլոր գրքերի եւ յօդուածների հեղինակների գրածները ներգաղթի ու արտագաղթի մասին համարեա նոյն բովանդակութիւնն ունեն, որ ներգաղթածները Հայրենիքում տեղ չուներան պետութեան եւ տեղացիների մօտ, փորձութեան ենթարկուեցին նրանց կողմից հայրենիքում ու «վայելեցին» Միլպի-րի «բարիքները»...: Բայց հարատւութեամբ պիտի նշեմ, որ անկախ իրենց այլքան հիասթափութիւնից, նրանք այդ նոյն տեղացիների հետ (որոնց մի մասը վնաս էին հասցնում պետութեանը՝ գործարաններում ջարդելով կամ իրենց պէտք եղած մի մասի համար շարքից դուրս հանելով տասնեակ հազարաւոր ուղղակիների արժէք ունեցող սարքաւորումները, որի ակունատեան եմ եղել) կերտեցին մեր հայրենանուէր, սքանչելի, համովհոտով անզուգական Երեւանը, իրենց հոգիները դնելով նրա սրտում... Եւ երգելով նրան նուիրուած սիրուած երգերը, ինչպէս՝ «Միտուն Երեւան, Գարուն Երեւան...», «Երեւան, Երեւան, դու միակ օթեւան, Ես կանցնեմ կը գնամ, դու կ'ապրես յաւիտեան...» Եւ այլն: Մի բայց եւս կայ. երբ քո արարքներով մարդկանց մօտ կորցրել ես վատահոլութիւնը քո նկատմամբ, այն չես կարող վերականգնել...: Տեղացիները պետութեան հետ չվստահեցին մեզ, յետագայում էլ կորցրեցին «ախպարների» կամ սփիւռքի վստահութիւնը վերականգնելու առիթը իրենց նկատմամբ՝ Հայաստանի անկախացումից յետոյ. իրենց թախանջիական վարքով բաց թողեցին պահը՝ սպանելով, վոնդելով սփիւռքահայ ներդրողներին, նրանց ունեցուածքները ձեռքներից խլելով..., որի հետեւանքը շատ ծանր եղաւ Հայաստանի զարգացման գործում, սփիւռքահայերը եւս հիասթափուեցին իրենց սիրելի հայրենիքում կատարուող անիրաւութիւններից եւ երես թեքեցին նրանից...:

Բնօրրանից սփիւռքացած հայը, թողնելով իր ծաղկուն այգետանը, նիւթապէս ապահովուած վիճակն ու պաշտօնը սփիւռքի տարբեր երկրներում, որոնց ժողովուրդների հետ նպատակաւ կ'իրենց երկրների տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտութեան եւ այլ բնագաւառների զարգացմանը՝ փոխադարձ յարգանք տաճելով իրար նկատմամբ, ներգաղթելով

Խորհրդային Հայաստան, աւելի շուտ հիասթափուեց ու յուսահատուեց կառավարութեան եւ տեղացի ժողովրդի վերաբերմունքից իր նկատմամբ, քան տիրող տնտեսական անդանեյի վիճակից: Ներգաղթած սփիւռքահայը որպէս իւրային անդամի չընդունուեց Հայրենիքում, չգուրգուրուեց, չփախիւսուեց, չյարգուեց, արհամարհուեց տեղացիների կողմից, որի հիմնական մեղաւորը կառավարութեան ղեկավարներն էին, որոնք իրենք գուրկ էին բարեկիրթ վերաբերմունքից, որպէսզի ժողովրդին նախապատրաստէին ներգաղթած իրենց «եղբայրներին ու քոյրերին» սիրալիր վերաբերմունք ցոյց տալու, սիրովելու եւ յուսադրելու ապագայի լաւատեսութեամբ (բացառութիւններ եղան):

Բերենք հանրագիտարանի տուեաները ներգաղթի մասին. «Հայրենադարձութիւնը ընթացել է երեք փուլով: Առաջին փուլը ընդգրկում է 1921-36 թթ.: Այս շրջանում տարբեր երկրներից... Հայաստան վերադարձաւ 42,2 հզ. հայ: Երկրորդ փուլում՝ 1946-48/49 թթ-ին իրականացուեց գանգուածային հայրենադարձութիւն: Հայաստան վերադարձան 89,7 հզ. հայեր...: 1950-ական թթ. անհատական կարգով Հայաստան վերադարձաւ աւելի քան 4 հզ. հայ: Երրորդ փուլն սկսուել է 1962-ից. մինչեւ 1982-ը Հայաստան են վերադարձել 32,5 հզ. հայեր 30 երկրներից...: 1920-80-ական թթ. ընդհանուր առմամբ հայրենադարձուել է 170 հզ. հայ» 11:

Բերենք որոշ տուեաներ «Հայ-Սփիւռք» հանրագիտարանից. «Գալով Հայաստան՝ նրանք առաջին իսկ օրուանից յայտնուեցին իրենց համար ծանր ու խորթ սոցիալ-տնտեսական պայմաններում, իրենց հանդէպ մշտական անվստահութեան միջոցով, որի տրամաբանական հետեւանքը եղաւ 1949-ին տեղացի «ժողովրդի թշնամիների» հետ նրանց մի մասի արտաքսումը Խորհրդային Միութեան հեռաւոր շրջաններ: 1975-ին Խորհրդային իշխանութիւնները, Հելսինկիում ստորագրելով Եւրոպայի անվտանգութեան ու համագործակցութեան պայմանագիրը, ստիպուած էին «ընտանիքների վերամիաւորման նպատակով» թոյլատրել հրեաների, գերմանացիների, նաեւ հայրենադարձ հայերի արտագաղթը երկրից: Չնայած բոլոր բացասական երեւոյթներին՝ հայրենադարձները (1962-82-ին Հայաստան ներգաղթեց եւս 32 հզ. մարդ) եւ արդէն Հայաստանում մեծացած ու ուսումն ստացած նրանց գաւակները նպաստեցին երկրի զարգացմանը, յատկապէս նշանակալի էր նրանց աւանդը մշակութի եւ գիտութեան ոլորտում (Երուանդ Քոչար, Յակոբ Յակոբեան, Վահրամ Փափագեան, Հրաչեա Ներսիսեան եւ այլն) 12:

Մի իրողութիւն ակնյայտ էր: Խորհրդային Միութիւնը թոյլատրեց ներգաղթը պատերազմից անմիջապէս յետոյ, երբ երկիրը բնաւ պատրաստ չէր ընդունելու մարդկանց՝ բնակարանների, սննդամթերքի, հագուստեղէնի եւ առաջին անհրաժեշտութեան այլ ապրանքների չգոյութեան կամ սղութեան պայմաններում, որի համար էլ աւելի դժգոհութիւն առաջացաւ ներգաղթածների մօտ:

Ներգաղթի մասին բաւական գրուեց եւ կարծում եմ ուսում-

Յենրիխ Մխիթարեանը Շարունակում է Պայքարը Անգլիայի Գաւաթի Յամար



Անգլիայի ֆուտպոլի գաւաթի խաղարկութեան 1/8 եզրափակիչ փուլում «Մանչեսթեր Շուռնայթերը», որի կազմում հանդէս է գալիս Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, արտագնայ խաղում 2:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ ցածր լիգայի ներկայացուցիչ «Բլեքբեռնի» նկատմամբ:

Խաղի հաշիւը 17-րդ րոպէին բացեց տանտերերի ֆուտպոլիստ Դենի Գրեհեմը: Տասը րոպէ անց Մարկուս Ռեշֆորդը վերականգնեց հաւասարակշռութիւնը, իսկ երկրորդ խաղակէսի 75-րդ րոպէին յաղթական կոլը խփեց փոխարինման մտած Զլատան Իբրահիմովիչը:

Հենրիխ Մխիթարեանը մասնակցեց ամբողջ խաղին եւ իր թիմին օգնեց մտնելու քառորդ եզրափակիչ փուլ:

Թուրքիայի քուէարկութեան արդիւնքում ֆուտպոլասէրները մեծամասնութեան կարծիքով հանդիպման լաւագոյն ֆուտբոլիստ է ճանաչուել Հենրիխ Մխիթարեանը:

Հայաստանի ազգային թիմի անդամ այս խաղի ընթացքում դարձաւ կոլային փոխանցման հեղինակ եւ մասնակցեց ամբողջ խաղին:

Ֆուտպոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում «Մանչեսթեր Շուռնայթերը» մրցակիցը կը լինի Լոնտոնի «Չելսին»:

Քառորդ եզրափակիչի միւս զոյգերն են «Տոտենհեմ» ու «Միլուոլը», «Միդլսբրոն» ու «Հադերսֆիլդ» - «Մանչեսթեր Սիթի» զոյգի յաղթողը, «Լինքոլն Սիթի» ու «Սաթոն Յունայթեդ» - «Արսենալ» զոյգի յաղթողը:

Հանդիպումները տեղի կ'ունենայ Մարտի 10-ից 13-ը:

Լուիս Էնրիկէ. 4:0 Յաշիւն Արտացոլում է Խաղադաշտում Տեղի Ունեցածը

«Բարսելոնայի» գլխաւոր մարզիչ Լուիս Էնրիկէ Ախոյեաններ լիգայի 1/8 եզրափակիչի առաջին խաղում ֆրանսական ՊՍՏ-ից կրած պարտութիւնից չետոյ կիսուել է տպաւորութիւններով:



«Ամէն բան պարզ է: Մրցակիցն աւելի ուժեղ էր գնդակով ու առանց դրա: Նրանք յաղթեցին մենապայքարներում ու խաղում էին աւելի արդիւնաւէտ: Հաշիւը խաղադաշտում տեղի ունեցածի արտացոլանքն է: Չեմ կարծում, որ այստեղ անհրաժեշտ են այլ բացատրութիւններ: Սա սպորտ է, որում առանց խնդիրների չի լինում: Պարտութեան պատասխանատուութիւնը վերցնում եմ ինձ վրայ: Մեղաւոր է մարզիչը, խաղացողները՝ նոյնպէս, քանի որ նախկինում նրանք յաղթում էին:

Առաջին խաղակէսից յետոյ իրավիճակն արդէն շատ բարդ էր: Մենք փորձում էինք վերադառնալ խաղ, սակայն յետոյ բաց թողեցինք երրորդ ու չորրորդ գոլերը: ՊՍՏ-ն ոչնչով չզարմացրեց: Մենք խաղից առաջ խօսում էինք նրանց պրեսինգի մասին, սակայն դա չի նշանակում, որ մենք կարող ենք դիմակայել դրան: ՊՍՏ-ն խաղաց այնպէս, ինչպէս մենք ակնկալում էինք: Մրցակիցը ցոյց տուեց իր լաւագոյն ֆուտպոլը: Սակայն ես չեմ կորցնում յոյսը: Պատասխան խաղում պէտք է խփենք 5 կոլ: Ես վստահ եմ իմ խաղացողների ուժերին», - մարզիչի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

Յիշեցնենք, որ «Բարսելոնային» Ֆրանսայի ախոյեանը յաղթել էր 4:0 հաշուով: Պատասխան խաղը կը կայանայ մարտի 9-ին Կատալոնիայում:

Մուրիցիո. Ամրանը Պոգբան Արդէն Չի Լինի Աշխարհի Ամենաթանկ Ֆուտպոլիստը

Անգլիական «Մանչեսթեր Շուռնայթերի» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրիշինոն կանխատեսել է, որ ամրանը տեղի կ'ունենան թանկ տրանսֆերներ:



«Մի երկու տարի յետոյ Պոգբայի տրանսֆերը կը համարուի էժան: Մի քանի տարի առաջ բացառիկ ֆուտպոլիստի համար վճարում էին 25 միլիոն ֆունտ ստերլինգ, իսկ հիմա այդքան է երիտասարդ ֆուտպոլիստի տրանսֆերի գինը:

Ամրանը տրանսֆերային շուկայում մեզ սպասում են անակնկալներ, իսկ Պոգբան արդէն չի լինի աշխարհի ամենաթանկ խաղացողը: Եւ դա լաւ է, քանի որ նա կ'ազատուի չափից շատ մեծ ուշադրութիւնից», - ասել է Մուրիշինո:

Յիշեցնենք, որ 2016թ. ամրանը Թուրքիի «Շուվենտուսը» Պոգբայի համար ստացել էր 89 միլիոն ֆունտ ստերլինգ:

Յուրգէն Կլոպը՝ «Բարսելոնայի» Սարգիչի Գլխաւոր Թեկնածու

«Բարսելոնայի» ղեկավարութիւնը մտադիր չէ ամրանը երկարաձգել գլխաւոր մարզիչ Լուիս Էնրիկէի պայմանագիրը եւ կազմել է թեկնածուների ցուցակ, գրում է Mirror-ը: Այդ ցուցակի առաջին տեղում «Լիվերպոլի» գերմանացի գլխաւոր մարզիչ Յուրգէն Կլոպն է, որն անգլիական ակումբի հետ ունի վեց տարուայ պայմանագիր: «Լիվերպոլի» ղեկավարութիւնը մտադիր չէ խզել պայմանագիրը, եւ «Բարսելոնան» ստիպուած կը լինի փոխհատուցել վնասը, եթէ Յուրգէն Կլոպն ընդունի առաջարկը եւ որոշի տեղափոխուել Կատալոնիա:



Յիշեցնենք, որ Ախոյեանների լիգայի 1/8 եզրափակիչի առաջին խաղում «Բարսելոնան» Փարիզում 0:4 հաշուով պարտուել է ՊՍՏ-ին: Պատասխան հանդիպումը Մարտի 8-ին է:

Կարէն Աղամալեան. Դաւիթ Թորոսեանին Թողել Եմ 5 Օլիմպիականներով Թիմ

Երբ Դաւիթ Թորոսեանը թողեց հաւաքականը, մենք չունէինք ոչ մի օլիմպիական ուղեգիր: Ես նրան յանձնում եմ մետալներով եւ 5 օլիմպիականներով թիմ:



Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց բռնցքամարտի տղամարդկանց Հայաստանի հաւաքականի նախկին գլխաւոր մարզիչ Կարէն Աղամալեանը՝ արձագանքելով NEWS.am Sport-ի «Դաւիթ Թորոսյան. Կարէն Աղամալեանից «Ժառանգութիւն» չեմ ստացել» հրատարակմանը:

Յիշեցնենք, որ հաւաքականի նորանշանակ մարզիչի խօսքով Կարէն Աղամալեանից հաւաքականն ընդունել է այն վիճակում, ինչպիսին թողել էր Եւրոպական խաղերից առաջ: Կարէն Աղամալեանը արձագանքել է Դաւիթ Թորոսեանի յայտարարութեանը:

«2016 թուականի Դեկտեմբերի 1-ի համագումարից յետոյ Դաւիթ Թորոսեանը հարցազրոյցներից մէկում ասել էր, որ լաւ ժառանգութիւն է ստացել ինձից եւ կարող է լաւ թիմ կառուցել դրա վրայ: Ես նոյնիսկ զարմացայ, որ Դաւիթ Թորոսեանը դրական է արտայայտուել: Բայց այսօր հակառակն է յայտարարում: Ինձ փորձում են սաղրել, բայց ես չեմ ենթարկուում այդ սաղրանքներին:

Ինքս երբեք ոչ մի մարզիչի աշխատանք չեմ մեկնաբանում եւ գնահատում, քանի որ իւրաքանչիւր մարզիչ ունի իր ոճը: Ինձ այն ժամանակ Թորոսեանի մասին շատ էին հարցեր տալիս, երբ նշանակուել էի գլխաւոր մարզիչ, բայց երբեք չեմ մեկնաբանել: Այսօր նա գնահատական է տալիս իմ աշխատանքին եւ յայտարարում, որ ոչ մի ժառանգութիւն չի ստացել ինձից, թիմի հետ աշխատանքը սկսել է այնտեղից, որտեղ թողել էր:

Ես նրան թողել եմ 5 օլիմպիական ուղեգիր նուաճած եւ Օլիմպիական խաղերին մասնակցած բռնցքամարտիկներով թիմ: Դաւիթ Թորոսեանին յաջողութիւն եմ մաղթում մարզչական գործում եւ նոր յաղթանակներ», - ասաց Կարէն Աղամալեանը:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain www.syrianarmenianreliefund.org